№ 132 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 20 ՅՈՒՆԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 20 ՅՈՒՆԻՍԻ № 132

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէ՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կօպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիեննայում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար **5** րուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ։

Ուսուցչական Միութեան Կենտրոնական Վարչութիւնը յայտնում է Միութեան անդամներին և Թիֆլիսում գտնվող բոլոր հայ ուսուցիչներին, որ, ամսիս 20-ին,

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ

մահվան տարելիցի առիթով հոգեհանգիստ է կատարվելու հանգուցեալի գերեզմանի վրա (Խօջիվանքի գերեզմանատանը)։ Պատարագն սկսվելու է առաւ. ժամը 10-ին, հոգեհանգիստը ժամը 12-ին։ 452. 1—1

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

յայտնում է ի գիտութիւն բոլոր ազգային-եկեղեցական-կուլտուրական և հասարակական հիմնարկութիւնների և ընկերութիւնների, թէ ցանկացողները՝ ողջունել Վեհափառի գալուստը Թիֆլիսի երկաթուղու կայարանում և վեհարանում, պէտք է գրաւոր կերպով յայտնեն այդ մասին Թիֆլիսի Թեմի կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսին առաջնորդարանում մինչև յունիսի 20-ը, նշանակելով ներկայացող պատգամաւորների անունները, որպէսզի կարելի լինի տալ տոմսակներ։
(ա. օ.) առ. 450. 2—2

Քառասնամեակ „Մշակի" «Տարազի» Յօբելեանական №-Ալմանախ ՎԵԼԵՆՕՎԻ ԹՂԹԻ վրա, յատուկ կազմով, պատկերներն առանց ծալելու, „Մշակի" գաւառական թղթակիցների համար (սահմանափակ) փոխանակ 10 ր. ԵՐԵՔ րուբլի։ Նոյնը իլիւստրասիոնի («ՏԱՐԱԶԻ») թղթի վրա 1 ր. 50 կ.։ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ №-ի հետ 2 ր.։
Դիմել՝ БЮРО ПЕЧАТИ. Тифлисъ, Голов. пр. 41.
26. 10—8

ԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ ֆրանսիական ժողովրդական միջոցը տարածելու նպատակով մենք վաճառում ենք փոքրիկ արկղիկներով, իւրաքանչիւրի մէջ
20 դեղհատ
Գինը 50 կօպէկ

1—2 դեղհատ երեկոյեան՝ ընթրիքից առաջ։
Այդ արկղիկները, նոյնպէս և 50 դեղհատ պարունակողները, կարելի է ձեռք բերել բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
(5,20) առ. (М. 337683) 962. 18—12

ՇԻՐԱԿԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

II

Ալէքսանդրօպօլի ցուցահանդէսը լաւ առիթ կարող է լինել հանդէս բերելու Շիրակի արդիւնաբերութիւնը, արձանագրելու տեղի ունեցած կատարելագործութիւնները, քննութեան ենթարկելու երկրի կարիքները և միջոցներ մշակելու արդիւնաբերութեան զարգացման համար։

Վաղուց ժամանակն էր Շիրակի զարգացման խնդիրը հերթական դարձնելու։ Եւ թող ցուցահանդէսը իր նախապատրաստական աշխատանքներով դառնայ առաջին քայլը Շիրակի տնտեսական զարգացման ծրագիրների մշակութեան ասպարէզում։

Շիրակը հարուստ է եղել և իր հարստութեամբ հռչակաւոր դեռ պատմական հին օրերից։ Նա հարուստ էր և մի կէս դար սրանից առաջ, երբ երկիրը դեռ խիտ չէր բնակեցված և ունէր իր սակաւաթիւ գիւղացիութեան համար ընդարձակ հողային տարածութիւններ։

Իսկ այժմ նա միայն իր հին փառքն է պարծենում. ներկայի համար նա քիչ նիւթ ունի արտակարգ հռչակ վայելելու։

Բայց կարող է բարգաւաճել, եթէ նպատակայարմար միջոցներ գործադրի, եթէ կերպարանափոխի իր տնտեսական կարգերը, եթէ բարուոքի հողագործութեան և կենդանաբուծութեան վաղեմի եղանակները, համաձայն նոր կուլտուրական ցուցումների։

Այն դասընթացքները, որոնք բացված են այս ամառ Ալէքսանդրօպօլում, կարող կը լինեն ծառայել իբրև նախերգանք այն կուլտուրական քարոզների և կոչերի, որոնք պէտք է հնչեն Շիրակի ամեն մի անկիւնում, բարուոքումների պատգամներ տարածելու գաւառական կեանքի բոլոր խաւերում։

Շիրակը խոշոր գիւղական շրջան է և նրա տնտեսութեան բարուոքման համար պարզաբանված խնդիրները կարող են որոշ գործադրութիւն և նշանակութիւն ունենալ նաև Ջաւախքի, Գեղարքունիքի, Ծաղկաձորի, Աբարանի և ուրիշ բարձրադիր շրջանների համար, որովհետև նրանց կլիմայական և տնտեսավարական պայմանների մէջ կայ նմանութիւն։

Բայց որպէսզի ցուցահանդէսը կարողանայ իրան վերապահված կարևոր և էական դերը կատարել գոհացուցիչ կերպով, անհրաժեշտ է խելացիօրէն կազմակերպել ամբողջ գործը և հոգատար լինել, որ երկրի կարիքները ակներև կերպով հանդէս գան իրանց բնորոշ կողմերով։

Մի ուրիշ անգամ մենք կը խօսենք այն նպաստաւոր և աջակից հանգամանքների մասին, որոնք նպատակայարմար կարող են լինել գործի համար։

Ա. Քալանթար

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի

Արմավիր.—Ժամանեց Կաթողիկոսը։

(Հեռագիր յանուն Եփրեմ եպ.-ի)
Արմաւիր, 18 յունիսի

Նորին Սրբութիւնը կը մեկնէ 8-րդ գնացքով ժամը 12-ին և Թիֆլիս կը հասնէ յունիսի 21-ին, հինգշաբթի, երեկոյեան։

(Հեռագիր յանուն Եփրեմ եպ.-ի)
Արմաւիր, 18 յունիսի

Հայ ազգաբնակութեան ներկայացուցիչները մեկնեցին ընդառաջ Նորին Վեհափառութեան Ռօստով։ Շատ կայարաններում ազգաբնակութիւնը ցնծութեամբ հանդիպեց Նորին Սրբութեանը ուրախ «կեցցէով»։ Տիրում է ոգևորութիւն։ Արմաւիրում բաց են բոլոր խանութները։ Ժողովուրդը հազարաւոր մարդկանցով առանց ազգի խտրութեան լի է փողոցներում. Մօտ 100 երիտասարդ ձիերով գնում են Նորին Վեհափառութեան կառքը շրջապատած. առաջից գնում են 2 քահանայ ձիով հայրապետական խաչն ու գաւազանը ձեռքերին։ Հազարաւոր բերաններից լսվում է շարունակ «կեցցէ»։ Տները զարդարված են դրօշակներով և գեղեցիկ հրավառված են։

Նորին Վեհափառութիւնը կայարանից մեկնեց հայոց եկեղեցի, ռուսաց տաճարը, ուր աւագ քահանան ողջունելով ասաց մարդկանց միացնելու սիրոյ խօսքեր։ Նորին Վեհափառութիւնը օրհնեց քահանային և նրա հօտը։

Կաթողիկոսի համար շքեղ բնակարան է յատկացված Ալ. Նազարեանի տան մէջ, իսկ շքախմբի համար՝ Պետրոս Մուրադեանի մօտ։

Արմաւիրում իսկական ժողովրդական տօն է։

Թիֆլիսի կաթողիկոսակ. ընդունելութեան յանձնաժողովի կարգադիր մասնաժողովը իր հեռագրին պատասխան ստացաւ Արմաւիրից Կաթողիկոսին ուղեկցող Բագրատ վարդապետից, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Թիֆլիս կը հասնի ոչ թէ հինգշաբթի, յունիսի 21-ի առաւօտեան, այլ նոյն օրվայ երեկոյեան։

Թիֆլիսի Թեմի կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսը այսօր մեկնում է Գանձակ, ուր ընդունելու է Վեհափառ Կաթողիկոսին։

Աղստաֆա կայարանը Վեհափառին ընդառաջող պատգամաւորութիւնը Թիֆլիսից կը մեկնէ վաղը կէսօրին։

Թիֆլիսի հայ-կաթոլիկների երէցփոխ-հոգաբարձական խորհուրդը ամսիս 17-ի իր ժողովում որոշեց ընտրել համայնքից և իր կողմից մի պատգամաւորութիւն, որը ներկայանալու է Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին և բարի գալուստ մաղթելու։ Ընտրվեցին հետևեալ անձինք. պ. պ. Ձերդ. Թահթաճեան, Կարապետ Քամարեան, Մկրտիչ Կարա-Մուրզա և Մկրտիչ Ոսկանեան, որոնց յատուկ թերթերով յայտնվեց. այս պատգամաւորութիւնը կը ներկայանայ Նորին Վեհափառութեանը կայարանում։

Մ. Ոսկանեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի

Բեռլին.—Վիլհէլմ կայսրը այսօր երեկոյեան Վիլդպարկ կայարանից մեկնում է Դանցիգ, այնտեղից՝ ռուսական ջրերը։ Շքախմբի մէջն են օբեր-հօֆմարշալ կոմս Էյլենբուրգ, գեներալ ֆօն-Պլէսսէն, ֆլիգել-ադիւտանտ ֆօն-Բիւլօվ և ֆօն-Դոմէս, պալատական բժիշկ ֆօն-Իլբերգ, քաղաքացիական, զինւորական և ծովային կաբինէտների կառավարիչներ ֆօն-Վալէնտինի, գ. ա. Լինկէր և գ. ա. ֆօն-Միւլլէր։

Վօլֆի գործակալութիւնը հաղորդում է, որ արտասահմանեան լրագիրներում տարածված այն լուրը, թէ իբր Թագուհու առողջութեան դրութիւնը առիթ է տալիս լուրջ երկիւղների, անհիմն է միանգամայն։

Դանցիգ. — Ռուսաստան մեկնելուն մասնակցելու համար «Հօհենցօլերն» զբօսանաւով կը գան կայսրը, կանցլերը և գեներալ-մայոր Տատիշչեվ։ Կայսրի հետ Դանձիգ է գալիս, ինչպէս նաև Ռուսաստան կը մեկնէ, պրինց Ադալբէրտը։

Խօյ.—Վանից և այլ տեղերից Սէերդու են գալիս թիւրքաց զօրքեր՝ մայիսի վերջերին ծագած քիւրդական քաջարի բեգերեան ցեղի ապստամբութիւնը ճնշելու համար. յիշեալ ցեղը թիւրքերին ներկայացրել է մի քանի քաղաքական ու տնտեսական պայմաններ։

Թիւրքերը այս օրերը բեգերեան ցեղի Բէկ-զադէի հետ ունեցան ճակատամարտ, որի մէջ կորցրին 50 ասկէր։

Թաւրիզ.—Շահսէվանները երեկ խզեցին հեռագրական կապը Թաւրիզի և Անարի միջև։ Շուջա-ուդ-Դովլէն Սէրաբից ստացաւ յուզիչ հեռագիր Բէշիդ-ուլ-Միւլքից, թէ 1000 շահսէվան դիմում են Սերաբի վրա։ Սերաբի խանը յոյս չունենալով կառավարական զօրքերի յաղթութեան վրա՝ գաղտնի բանակցութիւն է սկսել շահսէվանների հետ անձնատուր լինելու մասին։ Բէշիդը խնդրում է շտապով օգնութիւն հասցնել։

Կ. Պօլիս.—Հէլլէնների Թագուհին մեկնեց Օդեսսա։

Պատգամաւորների պալատ։ Ներկայ են զինւորական և ծովային մինիստրները։ Մասնաժողովի նախագահը առաջարկում է ընդունել այն օրէնքը, որ պատժում է քաղաքականութեամբ զբաղվող զինւորականներին։ Արգելքները հետևեալներն են. ներկայ լինել ժողովներին և մասնակցել քաղաքական ցոյցերին ու լրագիրներին։ Մասնաժողովը իրաւունք է տալիս զինւորականներին մասնակցել ընտրութիւններին։ Պալատը զինւորական մինիստրի ճառից յետոյ ձեռնարկեց օրինագծի քննութեան։

Պարիզ.— Հաղորդում են Լիսաբոնից, որ միապետականները փորձեցին ապստամբութիւն առաջ բերել Հիւսիսային Պորտուգալիայում. միջամտեցին զօրքերը։ Մի քանի մարդ սպանվեցին և վիրաւորվեցին։

Պուանկարէն ճառ արտասանեց մարոկկեան գործերի մասին և, պարզելով Ֆրանսիայի Մարոկկօյում ունենալիք խնդիրները, մատնանշեց, թէ Ֆրանսիան չէ կամենում արկածների քաղաքականութիւն և ոչինչ դէմ չի գործի միջազգային պայմանագրերի նկատամամբ, սակայն հովանաւորութեան մերժումը ինքնին արտաքսում է Աֆրիկայից։ Պուանկարէի ճառից յետոյ պալատը 400 ձայնով 79-ի դէմ ընդունեց հովանաւորութեան օրինագիծը։

Բէլգրադ.—Մինիստր-նախագահ Միլօվանօվիչը վախճանվեց։

Ներքին գործերի մինիստր Րիֆկօվիչին յանձնարարվեց կազմել ժամանակաւոր կաբինէտ։ Արտաքին գործերի մինիստրութեան ժամանակաւոր կառավարութիւնը յանձնվեց արտաքին գործերի մինիստրի օգնական Իօվանօվիչին։

Հռոմ.—14 տարի շարունակ—ի թիւս որոց նաև այս տարի—պետական եկամուտը ծածկվում է յաւելեալ եկամուտներով։

Պեկին. — Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն՝ տիբէթցիները մտել են Սիչուան նահանգի սահմանները։

Վիննիպէգ.—Ուրագանը մեծ աւերածութիւններ գործեց Րէգինում։ Զոհվել են 50 մարդ։ Վնասը մի միլիօն դոլլար է։

Բրէսլաւ.—Գիշերս Շմիդեֆէլդի մօտերը ճանապարհորդական գնացքը անցաւ հանրակառքի վրայով. 7 մարդ սպանվեցին, 11 հոգի վիրաւորվեցին։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի

Կ. Պօլիս.— Ալբան պարագլուխների պահանջները Բ. Դռնից՝ պարունակվում են 12 կէտի մէջ. դպրոցներում դասաւանդութիւնը լինի ալբաներէն, կրօնը՝ ազատ, ալբան լեզուն ճանաչվի պաշտօնական, երաշխաւորութիւն՝ որ սահմանադրութիւնը իրօք կը գործադրվի և պալատի ընտրութիւնները չեն ճնշվի, կառավարութեան ապակենտրոնացում, նշանակել ալբաներէն գիտցող պաշտօնեաներ, նշանակել գեներալ-նահանգապետ որոշ ժամանակով, տեղական ծախքերը գործադրել տեղական կարիքների վրա, ծախքերի աւելորդ մասը գործ դնել դպրոցներ կառուցանելու, վերականգնել ապստամբութեան ժամանակ քայքայված տները, զինւորական ծառայութիւնը սահմանափակվում է Ալբանիայով, վերադարձնել զէնքերը։

Ուսկիւբ.—Ապստամբ ալբանները իշխանութիւններին և անգլիական հիւպատոսին յանձնեցին մի յուշագիր, որի մէջ յայտնում են, թէ նրանք միշտ էլ հաւատարիմ կը մնան խալիֆին և հայրենիքին. նրանք գլխաւոր դեր կատարեցին սահմանադրութեան հռչակման մէջ, բարձրացրին ապստամբութեան դրօշակը ոչ միայն Ալբանիայի շահերի պաշտպանութեան համար, այլ որպէսզի փրկեն հայրենիքը այն վիճից, ուր նրան հրում էին երիտասարդ-թիւրքերը իրանց նզովեալ քաղաքականութեամբ, որը նորից թշնամու առաջ կը բանայ երկրի դռները. շնորհիւ տգէտ ղեկավարների՝ պետութիւնը կայծակի արագութեամբ դիմում է կործանման. ալբանները գիտեն, որ ուր չը կայ խելք ու կրթութիւն, այնտեղ չէ կարելի ձեռք բերել իրաւունքներ տրամաբանութեամբ ու համոզելով, ուստի և նրանք յարուցին ապստամբութիւնը։ Ալբանիային հարկաւոր են բարենորոգումներ։ Յուշագրի հեղինակները բողոքում են ալբաններին անպարտ ձգտումների մէջ մեղադրողների դէմ, մեղադրում են իրանց կողմից կառավարութեանը սահմանադրութեան հակառակ գործելում և ընտրութիւններին մասնակցելու մէջ, յայտնում են, թէ պաշտպանում են բոլոր օսմանցիների շահերը, աշխատում են վերականգնել իսկական սահմանադրութիւնը։ Յուշագիրը ստորագրել են 20 պարագլուխ։

Սօֆիա.—Երէկ կայացաւ մակէդօնական կազմակերպութիւնների ներկայացուցիչների համագումարը Բանաձևի մէջ անհրաժեշտութիւն է յայտնված պրօպագանդա մղել պատերազմելու Թիւրքիայի դէմ և այդ մարգով ազդել բուլղարական կառավարութեան վրա։

ՏԽՈՒՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔՈՒՄ

Ուստր, 11 յունիս (ն. տ.)

Հայկական տխուր երևոյթներու ու բարքերու ցուցադրութիւնը և Ամերիկայի մէջ...

Ասիկա առաջին անգամը չէ, ի հարկէ, բայց կ'երևի թէ վերջինն ալ պիտի չըլլայ։

Մինչդեռ մենք կը յուսայինք, թէ հայ տարագիր ժողովուրդն ազատ Ամերիկայի մէջ պիտի զգուշանար այլևս տեղի տալ հայ անունն ու ազգային պատիւն արատաւորելու, մինչդեռ մենք կը կարծէինք, թէ

ամերիկահայ գաղթականութիւնը՝ անցեալի դառն սխալներէն ու փորձառութիւններէն խրատուելով՝ խստա պիտի հրաժարէր այնպիսի գործերէ և քայլերէ, որոնք պատճառ պիտի դառնային հայ ժողովրդեան անարգուելուն ու նախատուելուն, սակայն ցաւօք սրտի կը խոստովանինք, թէ սխալած ենք եղեր։

Տխուր երեւոյթներու ու քարքերու ցուցադրութիւնը կրկին մեր աչքին առջեն է։

Անոնց հեղինակը սակայն հայ ժողովուրդը չէ, այլ եկեղեցական սքեմին տակ ծածկուած՝ հայ ժողովուրդը հովուելու և առաջնորդելու յաւակնութիւնն ունեցող հայ եկեղեցւոյ այն պաշտօնեան է, որ իր վատահամբաւ գործերով ծանօթ դէմք մը դարձաւ վերջերս։

Դա հայ հռոմէական եկեղեցիէն վռնտուած և հայ-լուսաւորչական եկեղեցւոյ գիրկը ապաստարան գտած Գաֆթանեան վարդապետն է։

Գաֆթանեան վարդապետի դէմ եղած բողոքները յաճախ մամուլի մէջ գրուեցան. ընթերցող հասարակութիւնը ծանօթ է անոնց. մենք կրկնել աւելորդ կը նկատենք։

Գաֆթանեան վարդապետ Ամերիկա վերադարձաւ կրկին ամերիկահայոց առաջնորդական փոխանորդի (?) հանգամանքով։ Ամերիկահայը երկու տարիներէ ի վեր արդէն բացարձակապէս վճռած ու յայտարարած էր, թէ այս կեղծաւոր, նենգ և շահախնդիր եկեղեցականը փոխանորդ չի ճանչնար և իր հետ ոչ մի բարոյական կապ չի ուզեր ունենալ։

Ամերիկայի ազգ. պաշտօնական մարմինները, որք են՝ երեսփ. ժողովը, կեդր. վարչութիւնը, թեմական ժողովը և հոգաբարձութիւնները, ստէպ յայտարարեցին իրենց այս որոշումը և գրեցին բարձրագոյն իշխանութեանց, բայց նկատի չառնուեցան։ Թէ ինչու Մայր Աթոռը անհետեւանք թողուց իրեն ղրկուած գրութիւններն ու խնդրանքները, մենք առ այժմ անյարմար կը նկատենք աստ պատասխանը տալ։ Ու Գաֆթանեան վարդապետ անշուշտ խրախուսուած ու քաջալերուած Մայր Աթոռոյ իրեն ցոյց տուած նպաստաւոր դիրքէն՝ վերադարձաւ Ամերիկա երեւակայական առաջ. փոխանորդի (?) պաշտօնով և զայն կիրարկել ուզեց ամերիկահայ ժողովրդի ու եկեղեցւոյ գլուխն այս անգամ կառավարական իշխանութեան միջոցաւ։

Աս ցաւը իրականութիւն է և ոչ թէ առասպել կամ յերիւրանք։

Գաֆթանեան վարդապետ ամերիկեան դատարանին դիմած է Ուստըրի ս. Փրկիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան դէմ, նախ ընդունել տալու իր փոխանորդութիւնը, երկրորդ՝ տէրն ու իշխանը դառնալու թէ եկեղեցիին, թէ առաջնորդարանին և թէ ազգային կալուածքներուն։

Անոր այս քայլը որքան ալ գռեհիկ և անպատուաբեր է, նոյնքան ալ վիրաւորիչ է ամերիկահայուն արժանապատուութեան տեսակէտով։ Ի՞նչ ըսել է դատարանական միջամտութիւն հրաւիրել այսպիսի ազատ և սահմանադրական երկրի մը մէջ, ուր կրօնքի և խղճի հարցերու մէջ կառավարութիւնը ոչ մի դեր կուզէ ունենալ։ Ի՞նչ կը նշանակէ հայ եկեղեցին ու եկեղեցական գործերը ամերիկեան դատարաններուն առջև քաշել և առիթ ստեղծել ամերիկեան մամուլին, որ սիւնակներ լեցնէ հայուն այս խայտառակութիւններովը և ծաղր ու ծանակ ընէ հայ ազգն ալ, հայ եկեղեցին ալ։ Այս ինչ հրէշ և շնացած մտածում է. առիկա կը վայլէ հայ եկեղեցւոյ պաշտօնեայի մը և կամ ուէ ազնիւ հայու, որ պատիւ ունի և զգացում։

Գաֆթանեան այս յատկութիւններէն զուրկ է։ Ուստըրի կարեւոր օրաթերթերէն «Telegram»-ը իր յունիս 3 թիւին մէջ երեք խոշոր սիւնակներ լեցուցած էր Գաֆթանեանին դատարանական միջամտութիւն հրաւիրելուն շուրջը, իր կորսուած իրաւունքները (?) ձեռք բերելու համար։ Ուստըրի հոգաբարձութիւնը անմիջապէս շրջաբերականով մը իմացուց ամերիկահայ թեմերու հոգաբարձութեանց Գաֆթանեանի այս յախուռն և անպատիւ քայլը, դատարանի միջոցաւ իր փոխանորդութիւնը ճանչցնելու ամերիկահայ ժողովրդին իր ձեռք առած այս յուսահատական փորձը։

Ուստըրի հոգաբարձութիւնը միանգամայն հետեւեալը հեռագրեց Էջմիածին Վեհ. Կաթողիկոսին.

«Գաֆթանեան դատ բացաւ հոգաբարձութիւններուն դէմ։ Ամերիկեան դատարաններուն և մամուլին մէջ հայ եկեղեցին կանարգուի։ Եթէ չօգնէք, պատասխանատու էք»։

Վեհ. Կաթողիկոսի տալիք պատասխանէն յայտնի պիտի լինի թէ՝ իրաւ Ն. Ս. Օծութիւնը արտօնած է Գաֆթանեանին կառավարական զօրութեամբ ընդունիլ տալու իր փոխանորդութիւնը, որ համարձակ ժեստով մը կը յայտարարէ հոս թէ՝ «Կաթողիկոսին հրամանովն է որ դատարանի կը դիմեմ»։

Ժողովուրդը վերջին ծայր գրգռուած է, գուցէ մեծ անպատեհութիւններ ծագին։

Ամերիկահայ գաղթականութեան հին և ծանօթ դէմքերէն՝ դոկտ. Անդրանիկ Այվազեան Նիւ-Եորքէն հետեւեալ ուշագրաւ տողերը կը գրէ Ուստըրի հոգաբարձութեան՝ այս խնդիրներուն շուրջը։

«Գաֆթանեանի շահատակութեան նոր լուրը չզարմացուց, այլ զայրացուց զիս։ Սկիզբն երկանց է Գաֆթանեանի այս քայլը։ Դժպհի է ինձ միտք յոգնեցնել այս մարդուն համար, որու անձն և գործերը վաղուցմանօթ էին ինձ, և ցարդ չէի յօժարէր անով զբաղելու։ Կը տեսնեմ, սակայն, որ պատւոյ տէր մարդոց լռութենէն քաջալերուելով Գաֆթանեան գործիք կընտրէ իրեն պարզամիտ ժողովրդեան մէկ մասը, և ինք գործակից ըլլալով այնպիսիներուն, որ հայաստանեայց լուսաւորչական եկեղեցւոյ ճշմարիտ շահերէն դուրս ուրիշ շահեր ունին, կը սպառնայ տխրահռչակ Նիկոլի դերը կատարել և Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ կրկնել Լեհաստանի հայ գաղթականաց տխուր պատմութիւնը։

«Օրէնսգէտ չեմ օրինական նրբութիւններու վրայ ձեզ խորհուրդ տալու, բայց սա գիտեմ, որ ինքզինքն առաջնորդական տեղապահ ճանչցնել տալու համար Գաֆթանեանի ձեռք առած անարգ միջոցներն և անոր ի գործ դրած դաւերը բաւական են այդպիսի մէկը դատապարտելի ընելու յաչս արդարակորով դատաւորաց։

«Հայ եկեղեցին նախատուած չէ այնու, որ Գաֆթանեան Ուստըրի ազգային հոգաբարձութեան դէմ դատ բացած է. ոչ. հայ եկեղեցին անարգուած էր այն օրէն, երբ Գաֆթանեանի տիպով մարդ մը ընդունուեցաւ իբրև պաշտօնեայ եկեղեցւոյ։

«Գաֆթանեան ինչ փաստաթուղթով և որ ծառայութեանց համար է, որ շաբաթական որոշ գումար մը կը պահանջէ Ուստըրի հոգաբարձութենէն։ Ո՞վ ըսած է Լօյօլայի այս ապիկար աշակերտին, թէ հայաստանեայց եկեղեցւոյ բանաւոր հօտը իրեք ոչխարաց հօտ մըն է, զոր կարելի է վարել որ կողմ որ մարդ կը փափաքի, անոր բուրդը խուզելու և միս ուտելու համար միայն»։

Ահա, ընթերցող, դոկտ. Ա. Այվազեանի պէս սիրուած և յարգուած, ու ամերիկահայ գաղթականութեան հզօրագոյն անդամներէն մէյուն անաչառ կարծիքը Գաֆթանեանի մասին։

Ու տակաւին Մայր Աթոռը կը յամենայ անդրադառնալու սոյն տխուր իրողութեանց վրայ և վերջ դնելու սա քաօսային և յուսահատական վիճակին։

Գաֆթանեանի անձին նկատմամբ հին վկայութիւններ ալ կան ազգային պատրիարքարանի արձանագրութեանց մէջ, որոնք բացայայտ կերպով ցոյց կուտան իր աղտոտ անցեալը, որ ներկան անոր շարունակութիւնն է։

Փաստը մէջտեղն է։ Ազգային պատրիարքարանի կեդր. կրօն. ժողովը 1904 թ. 30 յունիս և 2165 թուահամարով կը գրէ Սարաճեան եպիսկոպոսին հետեւեալը, Գաֆթանեան վարդապետը հայ. եկեղեցին ընդունելու առթիւ Սարաճեան եպիսկոպոսին հարցման ի պատասխան։

«Կեդր. կրօնական ժողովը, նկատելով որ յիշեալ վարդապետը, երբեմն զրոյց հանելով թէ՝ միլիոնատէրի մը որդեգիրը պիտի լինի, աստ անդ պարտքեր ըրած ու յետոյ չէ վճարած, և ուրիշ ատեններով ալ բաղդախնդիր անցեալ մը ունեցած ըլլալով՝ քանի տարիներէ ի վեր իր պատկանած Վեննետիկի Մխիթարեան ուխտէն ալ հեռացուած է, չկրցաւ ձեր խնդրած բարի վկայութիւնը տալ անոր մասին»։

Մեզի համար անբացատրելի կը մնայ հիմա, թէ ինչպէս ազգային պատրիարքարանը իրեն ծանօթ այսպիսի բաղդախնդիր և արատաւոր անցեալ ունեցող մէկը կը պաշտպանէ և կը հովանաւորէ։ Չենք հաւատար նոյնպէս, որ Վեհ. Կաթողիկոսը անտես ընէ այն բազմաթիւ բողոքները՝ ամերիկահայ տէրունի թեմէն ուղղուած սոյն բաղդախնդիր եկեղեցականին դէմ։

Գաֆթանեանի վերջին գայթակղալից ընթացքը պէտք է սթափեցնէ ամէն անոնք, որ հայ անունին ու պատիւին նախանձախնդիր են։

Կովկասահայ անաչառ ու անկողմնակալ մամուլին պարտականութիւնն է Էջմիածնի մէջ լսելի դարձնելու հեռաւոր ամերիկաբնակ հայ ժողովրդին այս անարդար բողոքը և վերջ դնելու ամօթալի կացութեան։

Բաւ է որքան շարունակուեցաւ։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ես 3 օրով բացակայ էի քաղաքից և այստեղ չէի, երբ կիրակի կայացաւ Վանքի եկեղեցում պատուիրակների ընտրութիւնը։ Վերադառնալով այսօր, ես աչքից անցկացրի լրագիրները և «Հորիզոնի» մէջ գտայ ամբողջ յօդուածներ, հայհոյանք, անուանարկութիւն իմ դէմ և նոյնիսկ այնպիսի մի նշաւակում իմ դէմ Լէօի կողմից, որ վերջին փողոցային սրիկան անգամ կամաչէր արտասանել (պ. Լէօն առաջարկում է ինձ «կրծել իր հողաթափները»)։

Այդ փողոցային հայհոյանքները ցոյց են տալիս, թէ որքան կատաղած, փրփրած են հորիզոնականները և իրանց լիդեր Լէօն։ Եթէ ես հետեւէի նրանց օրինակին, ես այսօր պէտք է գրէի մի յօդուած a la «Հորիզոն» և սկսէի այսպէս. «Սևացան... էն էլ ռնց սևացան...» և այլն, և այլն, ինչպէս արել էր «Հորիզոնը» իր № 124-ում, երբ Մողնու եկեղեցում ես նախագահ չընտրվեցի։

Յունիսի 17-ին Վանքի եկեղեցում կատարված ընտրութիւնները մի աւելորդ անգամ ցոյց տուին, թէ այնտեղ, ուր հայ ժողովուրդը գիտակցել է իր իրաւունքները, նրա առաջ ոչ ոք չէ կարող կանգ առնել. նա կը ջախջախէ, կը վռնդէ ամենքին և նրանց, որոնք եկեղեցին, ընտրութիւնները կամենում են դարձնել խուլիգանութեան, դեմագոգութեան ասպարէզ։ Սոսկալի ճնշող մեծամասնութեամբ հորիզոնականները այդ օրը սևացան, և նոյնիսկ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի անունը, որ նրանք կամենում էին շահագործել, դնելով նրա թեկնածութիւնը, բայց յետոյ ստիպված լինելով յետ վերցնել, չը կարողացաւ փրկել նրանց վերջնական ջախջախումից։ Այն ժողովուրդը, որի անունով շարունակ հորիզոնական - Թայֆայականները, մանաւանդ Լէօն, Ջամալեանները, Ղազարեանները, խօսում են, եկաւ և ցոյց տուեց իր ույժը ու փառաւորապէս սևացրեց հորիզոնականներին և՛ նրանց, որոնք յիմարութիւն էին ունեցել կապել իրանց անունը նրանց հետ։

Իսկ այդ նշանաւոր և ապագայի համար նշանակալից պատմութիւնը «Հորիզոնը» ներքին լուրերի բաժնում հազիւ երեք խօսքով է յիշում, թէ Վանքի եկեղեցում ընտրվել են պատուիրակներ այս-ինչ անձինք, մինչ Մողնու եկեղեցու ընտրութեանը ամբողջ յօդուածներ նուիրեց «սևացան...» և այլ այսպիսի խօսքերով։

Լէօն ինչքան ուզում է թող փփրէ, կատաղէ, հայհոյէ։ Ես կամ և կը մնամ նոյն Հ. Առաքելեանը, որին ներկայանալը, որի հետ խօսելը նա՝ դեռ Շուշի գտնված ժամանակ, երբ նոտարիուսի մօտ գրագիր էր, մի առանձին մեծ պատիւ էր համարում։

Այժմ նա առաջարկում է ինձ («Հորիզոն» № 129) իր «հողաթափները կրծել»։

Ասացէք, խնդրեմ, այդօրինակ գռեհիկ և անպարկեշտ խօսքերով բանակռիւ մղող պարոնի վերաբերմամբ մի՞թէ իրաւացի չէր իմ՝ նրան ասիացի անուանելը։

Երբ պայքարը, բանակռիւը ընդունում է այդպիսի տգեղ կերպարանք, միակ միջոցը —լռութեամբ արհամարհելն է և թոյլ տալը, որ ժողովուրդը ինքը խօսէ։ Իսկ ժողովուրդը արդէն խօսեց յունիսի 17-ին, և դա ամենալաւ պատասխանն է Լէօների, Ջամալեանների հայհոյանքներին։ Էլ չեմ խօսում այն փառաւոր ցոյցի մասին, որ ամբողջ հայ ժողովուրդը ցոյց տուեց «Մշակին», նրա հետ և ինձ, և դրանով արտայայտեց իր կարծիքը, թէ ով ենք մենք, ով են մեր հակառակորդները։

Հորիզոնականներին մնում է միայն ասել. «Սևացանք... էն էլ ռնց սևացանք»...

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կ. Հ. Բ. Ը. ճիւղի բացումն

Սև-Քար, 15 յունիսի

Մեր շինական հասարակութիւնը իր ամենաբարեպատեհ գործերից մէկը համարեց բացել իր շրջանում Կ. Հ. Բ. Ը. ճիւղ, որի համար խնդիր ներկայացրեց խորհրդին 41 անդամի ստորագրութեամբ և ստանալով նրա համաձայնութիւնը՝ ամսիս 5-ին ընդհանուր ժողով գումարեց և ընտրեց վարչութեան անդամներ հետեւեալներին. Նախագահ՝ Կարապետ Սարիբէգեան, գանձապահ՝ Պօղոս Ղալումեան, քարտուղար՝ տղերիս գրողին, անդամներ՝ Մարգար Յովսէփեան, Սահակ Մինասեան։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Սարգիս քահանայ Տէր-Սարգսեան, Ալէք Գօզալեան և Ա. Մակուրտեանց։

Վարչութիւնն իր գլխաւոր նպատակն է անելու կրթական մասի ընդարձակումը (գիւղում), մանաւանդ չքաւորների մէջ, և արհեստագիտութիւն մտցնել մեր շինականների շրջանում, որպէս է գործագործութիւն և այլն։

Անդամների թիւը հասնում է առ այժմ 41-ի։ Ճիւղի միութեան մէջ են մտնում հարեւան գիւղերը։

Մ. Տէր-Գէորգեան

—

Առատ հունձ

Ջէբրայիլ (Կարեագ. գաւառ), 8 յունիսի

Վերջապէս եկան հունձի օրերը, երբ կարելի է հեշտօրէն ստուգել հացահատիկների վիճակը։

Մինչև այս օրերը հասնելը քանի-քանի անքուն գիշերներ են անցկացրել խեղճ գիւղացիները կարկտի և մորեխի սարսափից։ Բայց նրանց յոյսերը իրականացան և, այսօր մեծ ուրախութեամբ յայտնում եմ, որ այսպիսի առատութիւն ոչ տեսված է, ոչ լսված։ Ահա այս պատճառով բոլոր գիւղացիութեան համար մեծ տօն է։

Ալ. Տէր-Յարութիւնեան

—

Ողբերգական մահեր

Մերվ, 9 յունիսի

Զորրորդ օրն է, ինչ ամբողջ Մերվի հայ հասարակութեան գիտակից մասը սուգի մէջ է՝ երկու մատաղահաս կանանց սրտաճմլիկ մահվան պատճառով, որը տեղի ունեցաւ ամսիս 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին, հետեւեալ չարաբաստիկ պայմաններում։

Եղբարք Բարաշեանների ամուսինները խոհանոցում իւղ հալելու ժամանակ, անյայտ պատճառներից կաթսան թեքվում ու իւղը թափվելով կրակի վրա՝ իսկոյն կարմիր լեզուակները տարածվում են փոքրիկ խոհանոցում, ընդգրկելով նաև կրակարանից ոչ հեռու դրված նաւթի տակառը։

Տակառը, երևի նաւթի գազից, պայթում է և կոլոր մասը պատնէշ գցված խոհանոցի փոքրիկ դռնակին, ոչ մի հնարաւորութիւն չը տալով դուրս ենել բակը։

Շշկլված կանայք մնում են բոցերով շըրջապատված։

Դժբաղդներին հազիւ մի կերպ աջողվում է բոցավառված զգեստներով դուրս թափվել բակը, ու սարսափահար երեխաներից զատ ոչ ոք չէ լինում։ Կրտսեր տեկինը իսկոյն վազում մտնում է բակում գտնվող ջրի տակառը և դրանով կրակը հանգցնում։ Իսկ միւսը, բոցավառված, աղիողորմ աղաղակներով ամբողջ բակում վազվզելով փնտռում է օգնողներ։ Տանտէր Կոստ. Մարտիրոսեանը, բաւական ուշ, դրսից վազելով խեղճ կնոջը փաթթում է հաստ շորերով և մի կերպ ազատում կրակից։

Տեսարանը սարսափելի էր. դժբաղդների օգնութեան պաղատանքները, նրանց փոքրիկ երեխաների հեծկլտոցները, խոհանոցի բոցավառված տեսարանը և վերջապէս այրված, սևացած դժբաղդների ամբողջ տեսքը ստեղծել էին սիրտ կտրատող տեսարան։

Երկուսն էլ ծանր դրութեան մէջ տարվեցին քաղ. հիւանդանոց, ուր առողջանալու ոչ մի յոյս չը տուին։ Այրուածքները մահացու էին, և երկուսն էլ սարսափելի տանջանքներով մեռան միանգամայն ծաղիկ հասակներում։ Հանգուցեալները Թող-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—o—

ԱՆՑԵԱԼԸ

—

Անցեալ դարու հայ վերածնութեան ամենէն արգասաբեր արդիւնքն է Հայոց Միացեալ Ընկերութիւնը։ Եւ ինչ բան կարող է ազգ մը աւելի բարձրացնել, ազնուացնել, կազմակերպել ու քաղաքակրթութեան բարձրագոյն մակարդակի մը հասցնել՝ քան դաստիարակութիւնը և դաստիարակութեան հզօր գործը։

Ո՛րքան ալ ազգ մը բարոյապէս ինկած ըլլայ, որքան ալ անոր նկարագիրը աղարտած, անոր զաւակները պառակտած ու անմիաբան, որքան ալ ան տգիտութեան խաւարին ճանկերուն մատնուած՝ գերի դարձած ըլլայ թշուառութեան, տառապանքի ու անկումի՝ յուսահատութիւնը պէտք չէ որ անոր դուռներէն ներս նայի, եթէ այդ ազգին մէջ դաստիարակութեան կարելիութիւնն ու ճիգը գոյութիւն ունին։

Հայոց Միացեալ Ընկերութիւնը ազգային այդ ճիգին արտայայտութիւնն եղած է ու կը մնայ՝ միշտ շրջապատուած տոհմային միահամուռ խանդավառ համակրութեամբ և համազգային եղբայրական գործակցութեամբ։ Հոն ու անոր շուրջը կը միանան ամենուն ձեռքերն ու սիրտերը։

Միացեալին անցեալն ու ներկան այդ կը խօսին։ Ակնարկ մը։

Հայկական վերածնունդը.—Երբ անցեալ դարու կիսուն Արեւմուտքէն կուգային գաղափարապաշտ անձնուրաց հայ երիտասարդները՝ արեւմտեան քաղաքակրթութիւնը, արեւմտեան դաստիարակութիւնը պատուաստելու, սփռելու իրենց հայրենակիցներու մէջ, ու նոր շարժումի մը, նոր սկզբունքներու, նոր իդէալներու ծաւալումին կը բոլորանուիրուէին, ճիշդ այդ ատենները այլ ազդակներէ մղուած նոր հոսանք մը կը ստեղծուէր ու կուռճանար մայր հայրենիքի ծոցին մէջ։ Ազգային գաղափարի վերածնութիւնն էր այդ։ Ու այդ գաղափարին մարմնացումն ու առաջեալը կը հանդիսանար հայաստանցի երիտասարդ ու ներշնչուած վարդապետ մը՝ Վանի ու Տարօնի Հայրիկը։

Այդ մեծ հայը, որ վերջին հայոց Հայրիկն եղաւ, Հայաստանէն կանցնէր Կովկաս, կանցնէր Կ. Պոլիս ու ամէն տեղ իր դիւթիչ լեզուով Հայաստանը կողբար ու Հայաստանը կերգէր։ Հօսանքները Արեւմուտքէն և Արեւելքէն կը միանային, ու բորբոքուած կրակը կը բռնկէր, կը հրդեհէր ամենուն սրտերը։ Խանդավառումի ինչ օրեր էին։

Երազներ կը ծնէին սիրտերու մէջ։ Հին ու նոր չկար, ամենքը մասնակից էին։ Խանդի ու եռանդի, գործունէութեան, միութեան ու անձնուիրութեան շրջան մը կը սկսէր։ Վերածնութեան աւելի երազուն ու եռանդուն դերակատարներ կը հանդիսանային դեռ դպրոցական գրասեղաններու վրայ ապրող պատանիները։ Ու անոնք ծնունդ կուտային Հայոց Միացեալ Ընկերութեան։

Խօսինք քիչ մը պատմութենէն։

Կրթական ընկերութեանց կազմակերպութիւնը.—Երբ Խրիմեան Հայրիկ 1869-ին պատրիարքութեան աթոռին կը կոչուէր, ճիշդ այդ երջանիկ անմեղ օրերուն, երբ ոչ ոք գիտէր, թէ ինչ փոթորիկներ կը սպասէին հայ ցեղին, ամէն հայաբնակ վայրերու մէջ ընկերութիւններ ու միութիւններ կը կազմակերպուէին հայութեան դաստիարակութեան, մտաւոր զարգացման և քաղաքակրթութեան ստանալու համար։ Այս շարժումը գոյութիւն ունէր ոչ միայն քաղաքներու, այլ աւելի ուժգնօրէն դպրոցական գրասեղաններու վրայ ապրող պատանիներու մէջ։

Այս կարգի պատանիներն էին, որ, ինչպէս վերը ըսինք, արդէն իրական հիմնադիրները եղան Հայոց Միացեալ Ընկերութեան։ Սկիզբները առանձին-առանձին ընկերութիւններ էին, որոնք վերջէն իրարու միացան, աւելի զօրաւոր թափով մը վարելու այն գաւառական կրթական գործը, որուն համար զոհաբերած էին իրենց ջանքն ու աշխատանքը։

Կիլիկեան Ընկերութիւնը.—Առաջին ընկերութիւնը Նուպար-Շահնազարեան վարժարանի աշակերտները կազմեցին։ Միւս առաջին ռահվիրաներն ըլլալու պատիւը իրենց կը վերաբերի։ Այս հաստատութեան բարձրագոյն կարգի ուսանողները, որոնց մէջ կը գտնուէին մասնաւորապէս կիլիկեցի տասը ժառանգաւոր աշակերտները, իրենց ընկերակից Մինաս Չերազի գրգիռովը և Խնամակալութեան նախագահ Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանի քաջալերանքովը հիմնեցին Վարդանեան Ընկերութիւնը, որ նպատակ ունէր կրթութիւն ծաւալել Կիլիկիոյ մէջ։ Նոյն տարին առաջին վարժարանը բացուեցաւ Հաջընի։ Այս Ընկերութիւնը, որ անունի նպատակայարմար փոփոխութեամբ մը եղաւ ապա Կիլիկեան Ընկերութիւնը, մին է Միացեալ Ընկերութիւնը կազմող երեք Ընկերութիւններէն։

Դպրոցասիրաց Արեւելեան.—Երկրորդը, Դպրոցասիրաց Միութիւնը, հիմնուեցաւ 1870-ին Գալաթա-Սէրայի Լիսէին հայ ուսանողներու կողմէն։ Յովհ. Թորոսեան, Յովհ. Շահնազար, Յովսէփ Նուրաւֆեան, Ստեփան Տամատեան, Կարապետ Սըվաճեան և ուրիշներ առաջին հիմնադիրները կը հանդիսանան այդ Ընկերութեան։ Իրենց գործունէութեան դաշտը Մեծ Հայոց Տուրուբերան նահանգը կընտրեն, իրենց տեսակէտ ընտրելով նախ կայուն դրամագլուխ մը կազմել և ապա գործի ձեռնարկել։ Այս Միութիւնը գործի ասպարէզ կիջնէ, և Արեւելեան Ընկերութեան հետ միանալէ յետոյ, իր առաջին վարժարանը կը բանայ Մուշի մէջ։

Արարատեան Ընկերութիւնը.—Իսկ երրորդը՝ որ հիմնուեցաւ 1876-ին՝ ամենէն կորովին ու ամենէն զօրաւորը եղաւ։ Արարատեան Ընկերութիւնն էր այդ, որուն հիմնադիրները եղան օրթագիւղցի 4—5 խանդավառ երիտասարդներ՝ Արփիար Արփիարեան, Զարեհ Շիշմանեան, Պետրոս Վասիլեան, Յովհաննէս Երլզգեան ու Մկրտիչ Փորթուգալեան։

Արարատեանին նպատակն էր Պոլիս գրանուող գաւառացի տղայոց ուսում և առուեստ սովրեցնել։ Երբ առաջին նիստը կը գումարուի, Մինաս Չերազն ալ կը հրաւիրուի, և շուտով իր ծրագիրը փոխելով Վասպուրական նահանգը ասպարէզ կընտրէ իրեն։ Հիմնադիր անդամներէն Մկրտիչ Փորթուգալեան որպէս տեսուչ Վան կը ղրկուի, և առաջին վարժարանը կը բացուի Ալիւր գիւղի մէջ։

Գործունէութեան ժամը ալ հասած էր։ Երեք Ընկերութիւններն ալ բարենախանձ մրցումի մը մէջ են։ Կը վազեն, կը գործեն, նոր վարժարաններ կը բանան, նոր յոյսեր կը տածեն։ Աննախընթաց գործունէութեան մը շրջանն է։ Արդ՝ երբեք հայութիւնը ուրիշ ոեւէ ատեն տեսած չէ խանդավառումի ու յոյսի այս ծփուն ալիքները։ Թիւրքիոյ մէջ և դուրս՝ ուր որ հայ կայ, հոն ձեռքեր կերկարէին օգնելու բնագաւառի կրթութեան գործին։

«Մշակ» Հայկակին նկարուն նամակները կը տարածէ Արարատին չորս բոլորը և անհուն համակրանք մը կը ստեղծէ Արարատեանին շուրջը։ Արծրունին կը մղէ ու կը մտրակէ հասարակաց կարծիքը, հայու սիրտ կրող մը չէ կարող խուսափել իր մասնակցութեան բաժինէն։ Մեծ, հսկայ ու նուիրական գաղափար մը կայ իրագործելու, և ամենքը սիրայօժար պարտականութեան սեղանին շուրջը կը բոլորին։ Ու նպաստի առատ հունձք մը կուգայ քաջալերելու ու կրկնապատկելու անձնուրաց երիտասարդներու աշխատանքը։

Յովհ. Յակոբեան

(Կը շարունակուի)

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԷՊԻ ՍԱՆԱՀԻՆ

III*)

Անցնենք այժմ Սանահին գիւղին։ Սա բաղկացած է 50 տնից, հիանալի դիրք ունի. բարձրութիւնը 3000 ֆուտի է հասնում։ Կլիմայական պայմանները գեղեցիկ են, օդը մաքուր, ջուրն առողջարար, տեսարանն զմայլելի։ Բայց առողջապահական պայմանները, շնորհիւ ժողովրդի տգիտութեան, անբաւարար են։ Գիւղում կան մի քանի լաւ բնակարաններ, որոնցից ամենափառաւորը ծխական դպրոցի նորակառոյց շինութիւնն է, որ կառուցել է իշխանուհի Սօֆիա Արղութեանը։ Սրա միջոցներով է պահվում նորաբաց ուսումնարանը։ Օգնում է մասամբ և իշխան Բօրիս Արղութեանը։ Երկրորդ բնակարանը պատկանում է Գանձակում ապրող իշխան Արղութեաններին, որոնք պարապում են գիւղական տնտեսութեամբ և արտաքուստ ոչ մի բանով չեն զանազանվում գիւղացիներից։ Շինվում են էլի մի քանի բնակարաններ։ Միւս բնակարաններն ըստ մեծի մասին գետնափոր են, ուստի և խոնաւ, կեղտոտ և հակառողջապահական։ Փողոցները նեղ են, ան-

*) Տես «Մշակ» № 131.

նում են իրանց տնից երեք ոբերի $1^{1}/_{2}$—3 տար. հասակներում:

Եղբարք Բարաշեանները քեխեի փոխարէն նուիրեցին տեղիս ծխ. դպրոցին մի փոքրիկ գումար: Ցանկալի էր այս օրինակը դառնար մի սովորութիւն մեր քեխխասէր հասարակութեան կեանքում: Sero

—

Անմխիթար վիճակ

Մեղրի, 7 յունիսի

Մեղրեցի 36 մեղադրեալների—որոնց գործը պիտի քննվի ամսիս 16-ին Գանձակ քաղաքում Թիֆլիսի դատաստանական պալատի նստաշրջանի կողմից—տնտեսական քայքայումը ներկայ աղէտալի տարին չափազանց զգալի և ծանր է մեր հասարակութեան համար: Մեղրին, որ տարեկան արտադրում էր 1300—1500 պուդ բոժոժ, այս տարի տուեց մօտ 700 պուդ. գինն էլ 12—13 ր. են շչնչում, իսկ փող չը կայ: Մրգեղէն չը կայ, եթէ հաշւի չառնենք խաղողը, որի առաջ դեռ վտանգ կայ. բամբակի բոյսերը շատ դանդաղ են աճում: Ասացինք՝ փող չը կայ, եղածն էլ գանձվում է արքունական հարկը, նոյնպէս և շրջակայ գիւղերինը, որոնց վիճակը մերինից թեթև չէ. նրանց յուսատեղը հացաբոյսերն են, որոնք առ այժմ յուսալի են:

Բնութեան հասցրած աղէտի համար պաշտօնապէս յայտնված է ժամանակին ուր հարկն է, բայց մինչև օրս կառավարութեան կողմից ոչ մի կարգադրութիւն չարվեց: Ներկայ նեղ օրերին միակ օգնութեան հասնողը գիւղացիներին մանր վարկի ընկերութիւնն է, որը ծով կարիքներին շատ քիչ օգնութիւն է կարողանում հասցնել՝ դրամագլուխ քիչ լինելու պատճառով:

Մեզանում առուտուրը կանգ է առել. հացի գինը չէ իջնում. ծախվում է ալիւրի պուդը 2 ր. 20 կ.—2 ր. 40 կ., ոչխարի մսի փունտը 15 կ., տաւարինը 12 կ., եղի պուդը 12 ր., պանրինը՝ 2 ր. 40 կ.՝ սերը քաշված: Ե. Վարդանեան

—

Աշակերտական էկսկուրսիա

Գանձակ, 13 յունիսի

Ամսիս 7-ին տեղիս Միքայէլեան արհեստաւորաց դպրոցի նոր տեսուչ Ն. Ա. Լիբերմանը և իր ամուսինը իմ մասնակցութեամբ 22 հոգի հասուն աշակերտներից տարան էկսկուրսիա:

Առաջին օրը հասանք Ղարաբաղ կայարան և այնտեղից դիմեցինք 3 վերստ հեռաւորութեան վրա գտնվող փորձնական դաշտը, որտեղ տեսուչը և դաշտի կառավարիչը ցոյց տուին ամեն տեսակի բոյսեր, տունկեր և ծաղիկներ և նրանց վրա դասախօսելով՝ ծանօթացնում էին այդ բոլորի գոյացութեան եղանակների հետ, որը ձեռք է բերվում մասնագիտական մշակութեամբ: Աշակերտները հետաքրքրութեամբ և ուշադիր կերպով լսում էին և ըմբռնում տեսչի և կառավարչի բացատրութիւնները մեծ գոհունակութեամբ:

Հետևեալ օրը, ամսիս 8-ին, հասանք Թիֆլիս և այցելեցինք արհեստաւորաց, այգեգործական ուսումնարանները, Բուսաբանական այգին, ծանօթանալով այդ բոլորի մասնագիտական գործնական աշխատանքների հետ:

Ի միջի այլոց այցելեցինք և պատմագիտական թանգարանը, որը մեր և աշակերտների վրա թողեց գոհացուցիչ տպաւորութիւն:

Այս թեթև արշաւանքը լաւ տպաւորութիւն թողեց սաների վրա, անբաւ շնորհակալութիւններ արտայայտելով տեսչին և սրա ամուսնուն՝ դէպի իրանց ցոյց տուած խնամքի համար և միջոցներ տալուն՝ այդպիսի բեղմնաւոր ճանապարհորդութիւն կատարելու:

Ափսոս որ արհեստաւորաց դպրոցի դրամական անձուկ միջոցը չը ներեց ընդարձակ էկսկուրսիա կատարել, բայց յոյս կայ, որ ներկայ եռանդուն տեսչի օրօք զարգանան դպրոցում տեսական և գործնական գիտութիւնները, կարևոր տնտեսական մասնագիտութեան ճիւղերով:

Այդ դպրոցի գոյութեան 25 տարվայ ընթացքում առաջին անգամն է, որ աշակերտներին տանում են էկսկուրսիա: Չորս օրվայ կատարած ճանապարհորդութեան ընթացքում աշակերտների դիսցիպլինան օրինակելի էր: Գ. Աստուածատրեան

—

Գիւղացու դէմքը պայծառանում է

Գորի, 16 յունիսի

Սկսած 1895 թւից մեր գաւառի չարքաշ գիւղացիութիւնը, բնութեան անտեղի հանաքների շնորհիւ, այնքան մեծ վնասներ է տեսել և պարտքի տակ ընկել, որ գլուխը կորցրել և յուսահատութեան մէջ էր ընկել:

Սակայն կարծես թէ բնութիւնը այս տարի ուզում է մեր գիւղացիներին հանել այս դրութիւնից և թեթևացնել մի փոքր նրանց պարտքերը: Իրար ետևից տեղացող առատ անձրևները և վերջին օրերիս տաք եղանակները ցորենի, գարու արտերը և առուատեղերի խոտերը մարդաբոյ բարձրացրին. խաղողի այգիները այնպիսի բերք են խոստանում, որ շատ տարիներ չէ եղել այս կողմերը. իսկ ինչ վերաբերում է պտուղատու ծառերին, նրանց վրա պտուղի շատութիւնից տերև չէ երևում: Եթէ բնութիւնը մի որևէ պատահարից ազատ պահէ մեր արտերը, խաղողի այգիները և պտղատու ծառերը, այս տարի մենք չը տեսնված առատութիւն կունենանք և մեր գիւղացու ծռված մէջքը մի քիչ կը դրտավի:

Անասունների հիւանդութիւն մինչև օրս ոչ մի գիւղում չէ երևացել: Գորիում ամեն ինչ օր ըստ օրէ էժանանում է: Եղանակը շատ նպաստաւոր է. յունիսի 11-ին եկած առատ անձրևը ուղղակի ոսկեց ամեն բան. գարու գինը, որ 1 ր. 20 կոպ. էր պուդը, այժմ իջաւ 90 կոպ.:

Մեսրոպ Մարութեան

—

Ընդհարում թիւրքմէնների հետ

Խոճա-Ուրգենչ (Խիվայի խան.), 28 մայիսի

Խռովութիւնները քանի գնում՝ մեծ ծաւալ են ստանում, Խիվայի խանի և թիւրքմէն ցեղի միջև:

Ամսիս 20-ին, ցերեկվայ ժամը 10-ին, տեղական իշխանութիւնը մի զինված զօրամաս է ուղարկում, թւով 45 հոգի, թիւրքմէն աւազակներին կալանաւորելու: Սակայն, աւանից 35 վերստ հեռաւորութեան վրա թիւրքմէնների անապատում, «Լօվծան» կոչված աուլում, հանդիպում են հինգ-ծանի հրացաններով զինված թիւրքմէն մի աւազակախմբի: Սկսվում է հրացանաձգութիւնը երկու հակառակորդ խմբերի միջև: Կռիւը տեւում է մինչև երեկոյ: Թիւրքմէնները երկար և ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս, ուստի փոխադարձ երկար հրացանաձգութիւն ունենալուց յետոյ՝ մութը ընկնելուց կառավարութեան զօրքերը նահանջում են՝ թողնելով կռւի դաշտում սպանված մի հոգի և ութ ձի. թիւրքմէնների կողմից սպանվում է երեք հոգի և երեք ձի: Նահանջող զօրամասը իր վերադարձի ճանապարհին «Կայտու ուշ» կոչված վայրում կալանաւորում է չորս թիւրքմէն առևտրականների, որոնք նոր են վերադառնալիս եղել մօտակայ Խօջայլիի շուկայից:

Ամսիս 21-ին յիշեալ չորս թիւրքմէններին շղթայակապ տեղս բերին և յանձնեցին իշխանութեանը:

Ինչպէս երևում է, այդ ձերբակալվածները ուղարկվելու են խանի մօտ: Նրանց կեանքը կախված է խանի բարեհայեցողութիւնից: Այս դէպքը աւելի գրգռեց թիւրքմէններին: Սպասվում է դարձեալ մեծ ընդհարում:

Ներկայումս մեզանում շոգ է: Այս տարի մեծ երաշտ է զգացվում: Խիվայում հունձը մօտ է: Արսէն Տէր-Գրիգորեան

—

Անարդար որոշում

Ալէքսանդրօպօլ, 17 յունիսի

Ս. Փրկչի դպրոցի հոգաբարձութիւնը այս տարի ուսուցչութիւնից արձակել է նոյն դպրոցի ուսուցիչ Ալ. Արշակունուն: Այդ լուրը ծանր տպաւորութիւն գործեց լսողների վրա:

Մի մարդ, որ մօտ 50 տարի ուսուցչութիւն է արել մեր դպրոցներում, այսօր առանց այլևայլութեան փողոց է նետվում իբրև մի անպէտք իր:

Այս բանը աւելի քան ցաւալի է, քանի որ հոգաբարձական կազմի մէջ կան նախկին ուսուցիչներ և ինտելիգենտ անձինք, որոնք, կարծում ենք, այդպէս թեթև կերպով չը պէտք է վարվէին մի վաղեմի ուսուցչի հետ: Այդ անպատուութիւնը ոչ միայն Ալ. Արշակունուն է վերաբերում, այլ ընդհանուր ուսուցչութեանը:

Զարմանալի է. նոյն հոգաբարձութիւնը մի երկու ամիս առաջ ուզում էր նրա ուսուցչութեան 45-ամեայ յոբելեանը տօնել, իսկ այսօր նոյն հոգաբարձութիւնն է դուրս շպրտում նրան փողոց: Մենք չենք վարանում մեր բողոքի ձայնը բարձրացնել այդպիսի մի անարդար վարմունքի դէմ: Հոգաբարձութիւնը, եթէ անյարմար էր համարում, իբրև ուսուցիչ պահելու, կարող էր քարտուղարութեան և թոշակատացութեան պաշտօնը չառնել նրանից, աւելացնելով այդ պաշտօնների վարձատրութեան վրա և 120 րուբլի տարեկան կենսաթոշակ:

Մենք կարծում ենք, որ տեղիս ինտելիգենտ ընկեր ուսուցիչների ջերմ մասնակցութեամբ հաշիւ կը պահանջէ հոգաբարձութիւնից իր այդ անարդար վարմունքի համար:

Որքան շուտ, այնքան լաւ:

Քաղաքացի

ՆԵՎԻՆՆԱՄԻՍՍԿԱՅԱ—ՍՈՒԽՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Սուխումից դէպի Վլադիկավկազ երկաթուղու որևէ կայարանը երկաթուղի անցկացնելու միտքը նոր չէ. դեռ 1879 թւին Բաթումի այն ժամանակվայ նահանգապետը հետախուզութիւններ էր անել տուել այդ գիծը շինելու համար. նրանից յետոյ Կուբանի ափին գտնվող «Էլբօրուս» ընկերութեան արծաթ-արճճեայ հանքերի վարչութիւնը նոյն հետախուզութիւններն արեց Կլուխօրի և Դոմբայ-Ուլգէնի լեռնանցքներով նոյն մտքով և վերջապէս 1896 թւին Վլադիկավկազի երկաթուղու ընկերութիւնը կատարեց վերջին հետազօտութիւնները. սակայն ամեն անգամ էլ երկաթուղի անցկացնելու միտքը անկատար մնաց:

Այժմ պայմանները փոխվել են. պետական հայեցակէտով՝ մասնաւոր ոյժերով երկաթուղի կառուցանելը համարվում է ցանկալի և հեշտացած է. պետութիւնն ապահովում է շինութեան վրա ծախսվելիք գումարի տոկոսները: Արտասահմանեան դրամատները ուրախութեամբ են օգնում այդպիսի ձեռնարկութիւններին, և հասարակական գիտակցութիւնն աւելի նպաստաւոր ու օժանդակիչ է հանդիսանում ներկայումս, քան առաջ:

Այսպիսի ելակէտ ունենալով՝ անցեալ տարի յուլիսի 4-ին ինժեներներ՝ Բերնատովիչ և ֆօն-Հաբիխ խնդիր մատուցին ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին, որ թոյլ տրվի տեխնիքական և տնտեսական հետազօտութիւններ կատարելու Սուխումից դէպի վլադիկավկազեան երկաթուղու կայարաններից որևէ մէկը՝ երկաթուղի կառուցանելու համար: Խնդիրը 11 ամիս մանրամասնին քննելուց յետոյ վերջապէս անցեալ մայիսի 7-ին իրաւունք տրվեց յիշեալ ինժեներներին կատարել յիշեալ գծի ուղղութեամբ հետախուզութիւններ՝ այդ գծի կառուցման համար:

Այդ երկու յարգելի ինժեներները ամսիս 12-ին Բաթալպաշինսկում գիւղական ներկայացուցիչներից ժողով գումարելով յայտնեցին նրանց իրանց կատարած աշխատանքների և ստացած արդիւնքների մասին, ապա առաջարկեցին ժողովին հետախուզութիւնների համար անհրաժեշտ ծախքի կէսը իր վրա վերցնել: Ժողովը ուրախութեամբ յանձն առաւ այդ ծախքը, բայց որքան եղաւ ամենքի հիասթափութիւնը, երբ նահանգապետից հեռագրով կարգադրութիւն ստացվեց հասարակական փողերին ձեռք չը տալու: Այս կարգադրութիւնը լսելուց յետոյ ժողովը որոշեց ընտրել երկու կամ երեք ներկայացուցիչ և ուղարկել նահանգապետի մօտ խնդրելու, որ թոյլ տրվի տալ հասարակական գումարներից 35,000 ր. ինժեներներ Բերնատովիչին և ֆօն-Հաբիխին՝ մտածված երկաթուղու հարցը գլուխ բերելու համար, և մինչ այդ որոշեցին դիմել մասնաւոր մարդկանց որոշ պայմաններով օժանդակելու այդ գործին:

Ժողովից յետոյ ինժեներները մի մանրամասն գրութեամբ դիմեցին Սուխումի շրջանի կառավարչին, որպէսզի արգելք չը դրվի իրանց գործունէութեանը, այլ օժանդակի նրա շուտափոյթ կատարմանը: Այժմ շուտով նրանք նոյն կերպ ժողով են գումարելու Սուխումում. յոյս կայ կարծելու, որ այնտեղի հասարակութիւնն աւելի խելահաս է լինելու և տեղական վարչութիւնն աւելի սրտի մօտ է ընդունելու այս ծանրակշիռ և վերին աստիճանի կարևոր հարցի բարեյաջող լուծումը:

Երկաթուղին անցնելու է Նեվիննամիսսկայա կայարանից նոյնանուն գիւղի վրայով դէպի Բաթալպաշինսկ, Կուբանի և ապա Տեբերդա գետի հովիտներով Տեբերդա ամարանոցի վրայով դէպի Կլուխօրի կամ Դոմբայի լեռնանցքը, որտեղից Տեբելդա գիւղի վրայով Կոտօր գետի հովտով գնալու է դէպի Սուխում: Այստեղ որոշված է նաւահանգիստ կառուցանել:

Երկաթուղին պաշտօնապէս անուանված է «Չերնոմորսկօ-Էլբրուսսկայա»:

Թէ ինչպիսի ապագայ է սպասում այս երկաթուղուն, բոլորովին դժուար չէ գուշակել, քանի որ ներկայումս արդէն այդ ուղղութեան վրա բանում են մի քանի քարածխային գործարաններ, մի գործարան ևս արծաթ-արճճեայ հանքատեղում. իսկ թէ էլ ինչպիսի հարստութիւններ կան այդ սարերում, դրա մասին փառաւոր տեղեկութիւններ ենք գտնում հանքային ինժեներ Մ. Ա. Կօխի հրատարակած գրքի մէջ.—պղինձ, երկաթ, ցինկ, ալեբաստր, ազբեստ, մարմար՝ ամենագեղեցիկ գունաւորումներով, օխրա, անկէզ, կաւ, կաւիճ, կիր և այլն և այլն. այս ամենն այնքան շատ են, որ դարեր են հարկաւոր դրանց արտահանելու համար: Անտառներն այս շրջանում հասնում են մինչև կէս միլիօն քառակուսի վերստ: Տեբերդա ամարանոցը, որին այնքան փառաւոր ապագայ է սպասում, նոյնպէս այս գծի վրա է գտնվում: Իսկ Սուխումի նաւահանգիստն այն մեծ նշանակութիւնը պէտք է ունենայ, որ հեշտացնելու է Ռուսաստանի և մանաւանդ Հիւսիսային Կովկասի հաղորդակցութիւնը արտասահմանի հետ: Մեզ յայտնի է, որ տարեկան մօտ հարիւր միլիօն պուդ հացահատիկ է դիզվում վլադիկավկազեան կայարաններում հերթի սպասելով և միայն Գրօզնայից ու նրա շրջակայքից Նովօրոսսիյսկով արտասահման է գնում մօտ 30 միլիօն պուդ նաւթ և այլ նիւթեր:

Բաթալպաշինսկում բացված է այժմ գրասենեակ, ուր գրվում են թէ դրամական օժանդակութիւն անողները և թէ ապագայ ընկերութեան ակցիաներ գնել ցանկացողները: Գրասենեակը տալիս է ամեն տեսակ տեղեկութիւններ: Որովհետև գրասենեակի կառավարիչը մեր գիւղի հայ քահանան է, ուստի տեղեկութիւններ կարելի է ստանալ և հայ լեզուով: Գիմմէնօ

Բաթալպաշինսկ, 14 յունիսի

ՑԱՆՔԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Նոր-Բայազէտ, 14 յունիսի

Թէպէտ ցանքերը այս տարի սկսվեցին շատ աջող պայմաններում, բայց դեռ վարուցանքի կէսին վրա հասան դաժան եղանակներ, որոնք մի փոքր խանգարեցին այդ դաշտային աշխատանքները, ուշացնելով վարուցանքը: Ձիւնը, ցուրտը և սառնամանիքները, որ տեղի ունեցան ապրել ամսում, մեծ երկիւղ տարածեցին ժողովրդի մէջ՝ ցանքերը վնասվելու նկատմամբ: Շատ տեղերում նոյն իսկ նորածիլ բոյսերը դեղնել էին և մրսելուն ենթարկվել: Սակայն անմիջապէս սկսեցին տիրել ախորժելի եղանակներ և ցանքերը կանոնաւորվեցին:

Սակայն ցաւօք սրտի պէտք է ասեմ, որ հակառակ անցեալ տարիների, երբ մեր հանդերում բանում էին 500-ից աւելի չութեր (չորոցներ) 1000-ից աւելի եզներով, այս տարի ընդհակառակն մեր չութերի թիւը 300-ից չէր անցնում, այնպէս որ շատ հողագործներ զրկված էին սեփական լծկաններ ունենալուց, ուստի այդպիսիների վարուցանքը տեղի էր ունենում կամ փողով (վարձով) կամ կիսաբար պայմաններով: Վերջին տեսակի ցանքերի մասին խօսելը թողնելով մի այլ բարեպատեհ ժամանակի, կասենք, որ վարձով վարելը մեզանում կայանում է հետևեալ հանգամանքներում: Մի օրավար հողը, որ $^{1}/_{3}$-ական դեսեատին տարածութիւն ունի (800 սաժէն), չորոցով արժէ վարել-ցանել 1 ր. կամ 1 ր. 20 կ., իսկ գութանով՝ 2 ր. 50 կոպ. կամ 3 ր., քանի որ սա աշխատում է 3—4 զոյգ լծկաններով, իսկ չորոցաւորները՝ 1—2 զոյգ եզներով: Գութանը վարում է օրը $^{2}/_{3}$-ական դեսեատին (1600 սաժ.), այն ինչ չորոցը, ինչպէս ասացի, $^{1}/_{3}$-ական դեսեատին (800 սաժէն) տարածութիւն:

Չորոցով հերկում, ցանում են այն տափերը, որոնք անցեալ տարի գութանով են վարվել և ցանվել, հետևապէս պարարտացված հողաբաժիններն են, իսկ գութանով վարում են մնացած, այն է՝ յոգնած արտերը, որոնք մի ամբողջ տարի դադարած են լինում և որոնց մակերևոյթը աւելի կարծր է լինում, հետևապէս աւելի դժուարավար: Չորոցը վարում է երեք վերշօկ խորութեամբ, մինչդեռ գութանը՝ հինգ վերշօկ եւրօպականը, իսկ տեղականը (սախկան) 6 վերշօկ և էլ աւելի: Սակայն այժմ տեղական ծանրաշարժ գութաններից քիչ է մնում մեր քաղաքում. նա գործածութեան մէջ է գաւառի գիւղերում, իսկ քաղաքի մեծամասնութեան հողագործութիւնը առաջ է տարվում կամ չորոցով կամ թէ եւրօպական երկաթէ թեթև գութաններով, որի արդիւնքը ակներև է, այն է թէ քիչ թւով լծկաններ է պահանջում և թէ մեծ արդիւնք տալիս:

Մխիթարականը այն է, որ այս տարի մեզանում մեծ տարածութեամբ ցանքեր են կատարվել. ամեն ոք աշխատել է ինչ գնով էլ ուզում է լինի՝ մեծ քանակութեամբ ցանել իր տափերը, յոյս կապելով այս տարվայ հողագործական արդիւնաբերութեան վրա:

Ցանքերի աճեցողութիւնը թէպէտ սկզբում դանդաղ էր ընթանում, բայց վերջին օրերի բարեյաջող եղանակները եկան արագացնելու մեր հողագործութեան յոյսերը, ուստի այժմ մեր բոլոր ցանքերը իրանց բաւարար դրութեան մէջ են նկատվում: Ինչ կը լինի վերջը, այժմեանից չէ կարելի գուշակութիւններ անել: Գ. Սեմանեան

ԳԻՒՂԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Սովի երկունքի մէջ են գիւղացիները: Թէև զրկանքներն և դառնութիւնները միշտ բաժին են եղել գիւղացիների, բայց այժմեան պակասութիւնը չը տեսնված է գիւղական տարեգրութեան մէջ: Գիւղացին աղքատութիւնից հոգնած է ընկել: Ամեն բան սպառվել է, օրերով քաղցած մնացողների թիւն անհամար է: Ալիւրի—ոչ լաւ տեսակի—թաղարը (10 պուդ) ծախվում է 20 ր.: Ցորեն, ալիւր շատ կան, բայց փողի մեծ պակասութիւն է: Դժբաղդաբար ապառիկ էլ չեն տալիս մինչև աշխատանքի օրերին արժանանալը: «Նորաքիւս» փողատէրերն իրանց խիղճը մեռցրել են. տոկոս վերցնելն անհնարին չափերի է հասել. 10 րուբլուն ամսական 50 կոպէկ տոկոս են վերցնում: Աւելի վերցնող էլ է լինում: Օրինակ՝ մի մարդ վերցնում է 6 ր. երկու ամիս ժամանակով, որի համար պարտաւորվում է, իբրև տոկոս, երկու օր մշակութիւն անել հնձի ժամանակ. մշակն ամեն տարի հնձին ստանում է 1 ր., այս տարի երևի կը հասնի 1 ր. 20 կ.—1 ր. 50 կ. արտերի լաւութեան պատճառով:

— Շատ է շահը տալել մի՛, ես քե ղանչաք չեմ անըմ,—ասում է փողատէրը. ինչ անէ անճար գիւղացին. թէկուզ մէկին մէկ տոկոս պահանջեն՝ պիտի վերցնէ. սովից կոտորվում են: Թէ որքան է ազդել հացի պակասութիւնը գիւղացիների վրա, կարելի է եզրակացնել հետևեալից. սովորութիւն կայ գիւղերում հացփոխութիւն կատարել. մէկի հացը մեծ էր լինում, միւսինը՝ փոքր, դրա վրա հարևաններն ուշադրութիւն չէին դարձնում. այժմ այլ կերպ են վարվում. հացը քաշով են տալիս...

Թաղարը, խանը կորել է, գիւղացին փունտով է ապրում: Որքան ապրել եմ գիւղացիների մէջ, սրանց այսպիսի նեղ դրութեան մէջ չեմ տեսել: Աղքատները ճարահատեալ, իրանց ապագայ կեանք ցելը ծախում են շատ էժան գնով. օրավարն, որ առաջ ծախվում էր 8—9 ր., այժմ 5 ր. հազիւ է ծախվում:

Մարդ զարմանում է գիւղացիների դիմացկունութեան վրա. սակայն ցաւալին այն է, որ գիւղացու այս անել դրութեան վրա ոչ ոք չի մտածում:

կանօն, աղբը կուտակված է գիւղի մէջ, միով բանիւ՝ կատարեալ պատկեր մեր յետ ընկած հայ գիւղերի:

Ամառ ժամանակ, երբ սկսվում է կասելը գիւղում, յարդի փոշին անտանելի է լինում: Եւ այդ պայմաններում, ինչպէս ասում էր մէկ ամարանոցաւոր, որ եկել էր Սանահին, «Թողից պատսպարվել անկարելի է, եթէ լուսամուտները չը ծածկես»: Այսպիսի հիանալի կլիմա ունեցող գիւղի ժողովուրդը պիտի աշխատի գրաւել ամարանոցաւորներին՝ շինելով յարմար բնակարաններ, կովերը հեռու տեղ տանելով, գիւղը մաքուր պահելով և այլն: Մինչև երբ մեր ժողովուրդը պիտի այդպէս անփոյթ գտնվի դէպի իր սեփական շահը: Չէ որ գիւղը եթէ յարմարութիւն ունենայ, կը գրաւէ ամարանոցաւորներ, որոնցից մեծ նիւթական օգուտ կը ստանայ:

Թէ սանահնեցիք և թէ մօտակայ գիւղացիք, իմանալով որ էկսկուրսանտների մէջ բժիշկ կայ, հաւաքվեցին մեծ քանակութեամբ: Ու ես աշխատա հետ միասին համարեա 2 օր զբաղված էինք—ես՝ հիւանդներ ընդունելով, աշխատ՝ դեղօրայք պատրաստելով: Իմ փորձից գիտէի, որ երբ պատահմամբ բժիշկ է երևում գիւղում, խռնոյն գալիս են հիւանդներ. այդ պատճառով էլ մի փոքր արկղ դեղօրայք էի վերցրել հետս, նոյնպէս և խիրուրգիական փոքրիկ ժողովածու: Բանից դուրս եկաւ, որ ես սխալված չէի: Հենց մեր գնացած օրվայ միւս առաւօտը հարկաւորվեց շուտափոյթ օգնութիւն: Մէկ 15 տարեկան տղայ, ուրիշ գիւղից եկել էր Սանահին՝ ծառայութեան, հէնց առաջին օրը ենթարկվում է իր տիրոջ շան յարձակմանը, շունը սաստիկ կծոտել էր նրան, ծունկերի մարթին պոկել և այլն: Հարկաւորվեց արիւնը կանգնեցնել, վէրքը կարել: Հիւանդների թիւ, որոնց ընդունեցի, հասաւ 50-ի:

Մի քանի խօսք գիւղի նիւթական դրութեան մասին: Գիւղն աղքատ է. հողերը պատկանում են մասամբ վանքին, մասամբ իշխան Արղութեաններին, որոնցից Սօֆիա Արղութեանն իր բաժինը Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութեան միջոցով կտակել է իր բացած դպրոցին: Նորերս ումն իշխան Աբամելիքեան, որ ունէր 460 դեսեատին հող լաւ անտառով, 6000 րուբլով ծախել է մի յոյնի, որովհետև գիւղացիք չեն կարողացել համաձայնել իրանց առնելու՝ շնորհիւ անմիաբանութեան, համայնական գործակցութեան բացակայութեան: Այժմ յոյնը համաձայն է հողը վաճառել գիւղացոց՝ բացի մի կտորից, որ պղնձահանք է պարունակում: Գոնէ այժմ առնէին գիւղացիք, մանաւանդ որ, ասում են, իշխան Նիկ. Վասիլևիչ Արղութեանը խոստացել է օգնել իր միջոցներով բանը գլուխ բերելու: Հանգամանքից պիտի օգտվել ու առնել հողը յոյնից, որ ապագայում մեծ արժէք կունենայ: Ի միջի այլոց մեզ պատմեցին մի շատ տխուր դէպք: Ուսումնարանի աշակերտներից մէկը գիւղից երկաթուղու կայարան գնալիս տեսնում է էլեքտրական թելերից մէկն ընկած է գետնին. մօտենում է, դիպչում նրան ու տեղնուտեղը վախճանվում էլեքտրական հոսանքից: Այդպիսի դէպքում Ալլահվերդիի Ֆրանսիական ընկերութիւնը պատասխանատու է՝ տուգանք վճարելով մեռածի ծնողներին, որովհետև այն տեղերում, ուր էլեքտրական թելն անցնում է ճանապարհի վրայով, թելի տակ ցանց պիտի լինի շինած, որ կտրված թելը մնայ նրա վրա՝ ճանապարհի վերևից, բարձրում: Ասում են, որ ընկերութիւնը կամենում է չնչին գումարով վերջացնել բանը. և տգէտ ծնողներն էլ չեն շտապում օրէնքի դիմելու և ընդունված տուգանքն ստանալու՝ քանի դեռ դիակը թարմ է, և վրան էլեքտրական հոսանքի հետքեր կան, ինչպէս տեսել են շատերը պատանու թաղման ժամանակ:

Ամսիս 5-ին մենք պատրաստվեցինք յետ դառնալու Թիֆլիս. կէսին դիտեցինք վանքը և իջանք Սանահնից Դեբեդ գետի եզերքը: Վանքի այգում ճաշեցինք և երեկոյեան 3 և կէս ժամին առանձին վագօնով վերադարձանք Թիֆլիս: Դժբաղդաբար մենք չը կարողացանք գնալ հռչակաւոր Հաղբատ, որովհետև Սանահնից այնտեղ յարմար ճանապարհ չը կայ, և աշակերտուհիները բաւական յոգնել էին: Այդ այցելութիւնը մնաց ուրիշ անգամի:

Մեր ճանապարհորդութիւնը անցաւ շնորհիւ տեսչի և տնտեսական մասի կառավարիչ Մելիք-Ջհանեանի, որոնք ամեն ջանք գործ դրին, որ ամեն ինչ յարմար և կարգին լինի:

Ընթացաւարտները, ինչպէս երևում է, շատ գոհ էին այդ ճանապարհորդութիւնից, որովհետև ստացան պատմական, գեղարվեստական և այլ շատ հետաքրքրական տեղեկութիւններ: Նրանք շատ ցանկալի էին համարում, որ այդպիսի ճանապարհորդութիւնները տեղի ունենան ոչ թէ տարին մէկ, այլ գոնէ երկու անգամ:

Պիտի շնորհակալ լինել հոգաբարձութիւնից, որ ճանապարհածախսի համար տուել էր 100 րուբլի: Մնացած ծախսի համար ուսուցիչներից իւրաքանչիւրը տուեց 5 ր., իսկ ընթացաւարտները 3-ական րուբլի: Եւ այդ չնչին գումարով բոլորեքեանս ստացանք ամենամեծ բաւականութիւն:

Ցանկալի է, որ մեր բոլոր ուսումնարանները ձեռնարկեն էկսկուրսիաներ, միայն առաջօրէն պատրաստած լաւ ծրագրով, ինչպէս յայտնեցինք յօդուածի սկզբում:

Բժ. Բ. Աղասարեան

Այս այսպէս լինելով՝ մի կողմից էլ նոր կեանքի շողի ծայրն է երեւում, արտերն սկսել են սպիտակել, հասկերը յղիացել են և մեղմ զեփիւռի առաջ օրօրվում են, պարում։ Շատ եմ ականատես եղել, թէ ինչպէս քաղցած գիւղացին փափախը վերցրած՝ երեսն դէպի երկինք է դարձրել և արտասուքն աչքերին մրմնջացել, որ աստուած իրան արժանացնէ, բաւական համարէ իր կրած դառնութիւնները...

Զղջացած գիւղացիների բնութեան արհաւիրքներն էլ միւս կողմից են ջղայնացնում, որ չէ լինում, որ կարկտախառն հեղեղներ չը լինեն. լսում ենք, թէ այս ինչ գիւղի արտերին վնասեց, այն-ինչ սարում տաւար ու ոչխար խեղդեց, Ղալաչայի սարում 10-ից աւելի կովեր է խեղդել. ականատեսները պատմում են, որ Թուրք Աքսիբարայի գետակի ափերին խեղդված պախրեր, արջեր, գայլի և այլ անասունների դիակներ են տեսել. բայց և այնպէս արտերը հասնում են. Կոթի, Դոստլու հայ գիւղերում գարու հունձն սկսվել է։

Ղալաչա — Ֆօրստէր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Յունիսի 18-ին, Թիֆլիսից մեկնեց երկու ամիս արձակուրդով Թիֆլիսի ոստիկանապետ փոխգնդապետ Ֆ. Զասիպկինը, որի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնը կը կատարէ նրա օգնական կապիտան Սարօյեվը։

✦ Հողաշինութեան և երկրագործութեան մինիստրութեան կովկասեան լիազօր Պ. Արխիպօվը իր պաշտօնից հրաժարական է տուել։ Նրա տեղ մօտերս կը նշանակվի ուրիշ անձնաւորութիւն։

✦ Յունիսի 16-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ Մօսկվայի Հնագիտական Ընկերութեան կովկասեան ճիւղի անդամների հրապարակային նիստը Ա. Լօպատինսկիի նախագահութեամբ, որի ժամանակ Կ. Դօզարեվը մի զեկուցումն կարդաց վրաց լեզուի մորֆոլոգիայի մասին։ Զեկուցումն առաջ բերեց մտքերի ջերմագին փոխանակութիւն, որովհետև զեկուցանողի թեզիսները ուղղված են եղել պրօֆ. Մառրի թեզիսները ջրելու ձգնամքին։ Նոյն նիստը որոշում է բաց թողնել 75 րուբլի Տէր-Աւետիսեանին Հաղբատի վանքի ուսումնասիրութեան համար։

✦ Երէկ առաւօտեան Թիֆլիսում վախճանվեց հանգուցեալ բարեգործ Յովհաննէս Խուդադեանի այրի Մարիամ Խուդադեան, 48 տարեկան։ Հանգուցեալը, ինչպէս լսեցինք, կտակել է Կ. Հ. Բ. Ընկ. Որբանոցին 1000 րուբ., Հայուհեաց Բ. Ընկ. 300 ր.։

✦ Կիրակի, յունիսի 17-ին, ինժ. Արշակ Բաբեանի նախագահութեամբ կայացաւ բնակարանատէրերի և բնակարան վարձողների նորակազմ ընկերութեան հիմնադիրների և անդամների բազմամարդ ժողովը, որի ժամանակ ընտրվեց այդ ընկերութեան համար ժամանակաւոր բիւրօ, որի կազմի մէջ մտան Արշակ Բաբեանը, Բարսեղ Բարսամեանը, Ա. Մեկէլը և այլք։ Բիւրօյի պարտականութիւնն է ընդունել նոր անդամներ, մշակել օրակարգ առաջին ընդհանուր ժողովի, դիտել հողաբաժինները, որոշել տների տիպերը և այլն։ Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը տեղի կունենայ սեպտեմբերին։

✦ Յունիսի 18-ին, վրաց բարեգործ Դ. Զ. Սարաջեվի մահվան տարեդարձի օրը հանգուցեալի գերեզմանի վրա հոգեհանգստեան կարգ կատարեց, պատարագ մատուցանելուց յետոյ, Գօրու Անտոն եպիսկոպոսը, վրաց հոգեւորականութեան մասնակցութեամբ։ Հոգեհանգստի ժամանակ գերեզմանի վրա դամբանական խօսեց Անտոն եպիսկոպոսը։ Հոգեհանգստեան ներկայ էին վրաց ազնուականութեան պարագլուխները, Թիֆլիսի քաղաքագլուխը, վրաց հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները և յարգողների խուռն բազմութիւն։

✦ Պետերբուրգի մի ընկերութիւն, որը սուրիձ է պատրաստում ոսկորներից, առաջարկել է Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեանը նոր կառուցվող սպանդանոցի մօտ 4000 քառ. սաժէն տարածութեան հողաբաժին յատկացնել, որի վրա պիտի կառուցվի սուրիձ պատրաստելու գործարան։ Հողաբաժինը խնդրվում է կապալով 20 տարի ժամանակամիջով, իրաւունք տալով նախաձեռնողներին կրկին կապալով վերցնել խնդրվող հողաբաժինը։ Յիշեալ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ ընկերութիւնը պարտաւորվում է այդ հողաբաժնի վրա կառուցել հսկայական գործարան տեխնիկայի վերջին խօսքի համաձայն, այլև բնակարաններ գործարանի ծառայողների և բանւորների համար, բնակարանի շուրջը տնկելով մեծ պարտէզ։

✦ Թիֆլիսի քաղաքային դումայի իրաւասու Պ. Կիզիրեան թողնում է իրաւասուի կոչումը։ Նրա տեղ որպէս իրաւասու կը հրաւիրվի ձայների համեմատական մեծամասնութիւն ստացած երդ.-հաւատ. օգնական Շալվա Ալէքսի Մեսխիեվը։

✦ Յունիսի 18-ին, ցերեկով, Կոստանտինօվսկայա փողոցում ձերբակալվեց Թիֆլիսեցի Գէորգ Սուքիասեանը, որը Թիֆլիսից Գօրի աքսորված լինելով ինքնակամ վերադարձել էր Թիֆլիս։

✦ Յունիսի 18-ին Մուխրանսկայա փողոցի վրա գտնվող Զանդարաշվիլիի կօշկակարական արհեստանոցում Արտաշէս (նա ինքը Ռուբէն) Ալաձեանը դանակով վիրաւորեց թեթև կերպով Ալէքսանդր Կուլիջանովին։ Յանցագործը ձերբակալված է։

✦ Որոշված է ռուսական փոխադարձ վարկային բանկի բացումը Թիֆլիսում կատարել ընթացիկ տարվայ նոյեմբերին։

✦ Համաձայն Վրաց մէջ Դրագ. Տարածող Ընկերութեան ընդհանուր ժողովի որոշման, Ընկերութեան գրադարանը տեղափոխված է վրաց գիմնազիայի շէնութիւնը, որտեղ գտնվում է նաև յիշեալ Ընկերութեան թանգարանը։

✦ Վրաստանի Պատմա - Ազգագրական Ընկերութեան մասնագէտ անդամները այս ամառվայ ընթացքում կը ճամբորդեն Վրաստանում մարդաբանական, պատմական և հնագիտական նիւթեր հաւաքելու նպատակով։

✦ Ղարաքիլիսայից մեզ հեռագրում են, որ այնտեղ վախճանվել է ծերունի գրականագէտ և ուսուցիչ Մակար Տէր-Սարգսեանը (Փառնակէս)։ Թաղումը տեղի կունենայ յունիսի 21-ին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 12 յունիսի

Մօտերս Բագուի Հայոց Կուլտ. Միութիւնը դիմեց յայտնի կոմպօզիտոր Ա. Սպենդիարեանին, խնդրելով որ վերջինս հայերէն կանտատա (մեղեդի) յօրինի, որը և Ա. Սպենդիարեանը կատարեց։ Բայց դժբաղդաբար այդ կանտատայի մասին ոչ մի տեղեկութիւն չունի ոչ ինքը հեղինակը և ոչ էլ մենք՝ հայոց կանտատայով հետաքրքրվողներս։

Ներկայումս Ա. Սպենդիարեանը հայերիս մէջ միակ խոշոր կոմպօզիտորն է, սակայն կովկասցիներին շատ քիչ է յայտնի նա, ինքս անձամբ ծանօթ լինելով Ա. Սպենդիարեանի կանտատայի հետ՝ չեմ կարող չը ցաւել, որ Բ. Հ. Կուլտ. Միութիւնը մինչև օրս չէ օգտվել այդպիսի մի հրաշալի երաժշտական գրուածքից, այն ինչ նրանով օգտվել են Պետերբուրգում։ Ա. Սպենդիարեանի կանտատան, որը գրված է Խաչ. Աբովեանի բանաստեղծութիւններից Ալ. Կ. Գլազունովի առաջարկութեամբ, պէտք է նուագէ Կայսերական Ռուսաց Երաժշտական Ընկ. սիմֆօնիական խումբը մասնակցութեամբ Կայսերական Մարիինսկի թատրօնի դերասան Երշովի։

Կարծում եմ, որ Բ. Հ. Կ. Միութիւնը, եթէ ուզում է հասարակութեան լայն խաւերը ծանօթացնել լուրջ երաժշտական աշխատութիւնների հետ, աւելի մեծ գործ կատարած կը լինէր, եթէ աշխատէր Սպենդիարեանի աշխատութիւնը տարածելու, քան թէ «Լէյլէբիջի» և դրանց նման աշխատութիւնները կազմակերպելով։

Պետերբուրգի կօնսերվատօրիայի ուսանող
Անուշաւան

—

Թիֆլիս, 17 յունիսի

«Մշակի» № 129-ում լոյս տեսած մի յօդուածի («Հօրիզօնի» նոր սխրագործութիւնները» վերնագրով) անանուն հեղինակը, կամենալով սուտեր ձգել թէ իմ անձնաւորութեան և թէ իմ ամուսին՝ Յովնանեան դպրոցի նախկին հոգաբարձուհի՝ տ. Դ. Թաղէոսեանի վրա, թոյլ է տալիս իրան յայտարարելու, որ դպրոցի կառավարիչ պ. Մ. Անանեանին յատկացվել է մեծ ռոճիկ, որպէսզի պ. Անանեանն էլ, իր հերթին, ինձ իրանց կալուածների կառավարչի պաշտօնի մէջ պահէ։

Ի գիտութիւն ընթերցողների հարկադրված եմ յայտնել, որ Մ. Անանեանը ոչ մի առնչութիւն չունի ոչ ինձ, ոչ էլ Աջամէթ կալուածքի հետ, որ ես 14 տարվայ ընթացքում կառավարում եմ միանգամայն անկախ տեղիս Անանեաններից և որի տէրերը մօսկվաբնակ Անանեաններն են։

Ա. Թաղէոսեան

—

Ախալքալաք, 13 յունիսի

«Մշակի» № 121-ում կարդացինք Ախալքալաքից «Միական» ստորագրութեամբ մի թղթակցութիւն, որով նամակագիրը յայտնում է, թէ իբր «հոգաբարձական ընտրութեան ժամանակ մէկը չէ ընտրվում հոգաբարձու և զայրացած այդ բանից ահա 3—4 օր է, ինչ թուղթը ձեռին ընկել է ալբաճարանները մոլորեցնելով ժողովրդին այն մասին, որը ժողով իսկ եկած չէ եղել, խափելով՝ թէ ընտրութեան թերթն է ստորագրել տալիս»։

Միականի այն մեղադրանքը, թէ մենք մոլորված և խաբված ստորագրել ենք որպէս թէ ստորագրելիք բողոքագրի փոխարէն ընտրութեան թերթի տակ, իրականութեան չէ համապատասխանում։

Ճիշդ է, մենք ստորագրել ենք բողոքագիրը, որովհետև ընտրութիւնը կատարվել է ապօրինի, և խնդրել ենք հոգևոր իշխանութիւնից չը հաստատել այդ ուխտված պարոնների հոգաբարձուական պաշտօնների մէջ։ Այս այսպէս լինելով՝ մենք պահանջում ենք Միականից յընթացս երկու շաբաթվայ նոյն լրագրութեան միջոցով դուրս գալով կեղծ դիմակի տակից՝ յետ վերցնել իր խօսքերը. հակառակ դէպքում դուք, Միական, կը ստանաք ձեր արժանի պատիժը։

Գրիգոր Պետրոսեան, Տօնական Տօնականեան, Մնացական Ազնաւուրեան, Արշաւիր Դիլադեան, Վաղարշակ Դիլադեան, Մարտիրոս Տէր-Կիրակոսեան, Ա. Ալբերտեան, Ե. Դիլադեան, Գր. Գէորգեան, Վ. Կճանեան, Վ. Մուրադեան, Վ. Միրաքեան, Գ. Միրաքեան, Ա. Մելիքեան, Ս. Փեշտմալճեան, Տ. Բդօյեան, Գ. Աբրահամեան, Ս. Ինաչեան, Խաչատուր Շահպարոնեան, Ս. Տէր-Յակովբեան։

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ծերելզայի հայոց եկ.-ծխ. դպրոցի նախկին ուսուցիչ պ. պ. Ենոք Տէր-Ենոքեանին եւ Միքայէլ Մուլթաֆեանին

—

Ծերելզա, 15 յունիսի

Խնդրում եմ փութով յայտնեցէք ձեր հասցէն, որպէսզի հնարաւորութիւն ունենամ կարգադրելու դպրոցիս և ձեզ հետ կապված մի նախկին հաշիւ։

Ա... ուսուցիչ՝ Եղիշէ Տէր-Պօղոսեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Կ. Պօլսի զօրքերի մէջ ևս սկսվել են յուզմունքներ։ Դրութիւնը դառնում է վտանգաւոր։ Կառավարութիւնը դժգոհների վերաբերմամբ չէ վստահանում զինւորական ույժ գործադրել, երկիւղ կրելով ընդհանուր զինւորական ապստամբութիւնից, որից կը բռնկվի երկրորդ յեղաշրջում։

✦ Ամեն բօպէ Կ. Պօլսում սպասվում է մեծ վէզիր Սաիդ փաշայի և զինւորական մինիստր Շէվքէթ փաշայի հրաժարականը, որովհետև ներկայ կառուցուածքի մէջ նրանք անկարող են մնալ կաբինէտի մէջ։

✦ Կ. Պօլսից մի քանի յայտնի պատգամաւորներ մեկնում են Մօնաստիր և այլ ապստամբ վայրերը՝ յորդորելու դժգոհներին խաղաղվել և ներքին երկպառակութիւնների պատճառ չը դառնալ, քանի որ դրսի թշնամին դեռ շարունակում է սպառնալ Թիւրքիային։

✦ Բալտիական ծովում Թագաւոր Կայսրի և գերմանական կայսր Վիլհէլմի տեսակցութեան ժամանակ ամենաառաջին հարցը, որ գերմանական կանցլերը և Սազօնովը յարուցելու են, դա Թիւրք-իտալական պատերազմին վերջ դնելու խնդիրն է, համաձայն այն նախագծի, որ կազմել է կանցլերը Վիլհէլմի անմիջական մասնակցութեամբ։

✦ Ֆրանսիական մամուլը հաւատացնում է, որ ռուս-գերմանական յարաբերութիւնները սառն բնոյթ են ստանում շնորհիւ Բերլինում լրտեսութեան կասկածով ռուս օֆիցէր Կոստեվիչի ձերբակալութեան։

✦ Լօնդօնում յունիսի 14-ին կազմակերպվեց «սպիտակ ծաղկի» օր, երբ հանգանակվեց 300,000 րուբլի հիւանդանոցների համար։ Նուիրատուութիւններ ստացվում են նաև ուրիշ քաղաքներից։

✦ Կանտօնի զօրքերը քաղցած ազգաբնակութիւնից գնեցին 800 աղջիկ՝ Կանտօնի անառականոցներին վաճառելու համար. Աղջիկներին խլելու փորձի ժամանակ զինւորները սպանեցին մի քանի ոստիկանների. Զինւորական դատարանի որոշմամբ՝ բոլոր դրդիչները գնդակահարվեցին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
18 յունիսի

ՎԻԵՆՆԱ։ Օդագնացութեան շաբաթը վերջացաւ։ Սլավօրօսօվը ստացաւ երրորդ մրցանակը՝ 1000 կռօն՝ հեռաւոր տարածութիւն թռչելու համար։

ՏՕԿԻՕ։ Ռուսաց դեսպանի մօտ կայացաւ պաշտօնական նախաճաշ ի պատիւ Կացուրայի և Գօտօյի մինիստրների և ռուս-ճապօնական ընկերութեան կոմիտէի անդամների ներկայութեամբ։

ՍՕՖԻԱ։ Հասարակական աշխատանքների մինիստրութիւնը մրցանակ նշանակեց Սօֆիայում պետական շինութիւններ կառուցանելու համար։ Ժամանակն է դեկտեմբ. 1 այս տարվայ. մրցանակներն են 6000, 4000, 2500 և 1250 ֆրանկ։

ԲԵՎԼԻ։ Բացվեց պրիբալտիկ պատմաբանների երկրորդ համագումարը պրօֆ. Գաուսմանի պատուաւոր նախագահութեամբ։ Մասնակցում են մօտ 160 մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սամարայի նահանգապետին փոխադրվեց կէս միլիօն րուբլի հասարակական աշխատանքների համար։

«Бирж. Вѣд.»-ն ենթարկվեց 400 ր. տուգանքի «Քաղաքական խուզարկութիւնը Բալկանում» յօդուածը տպելու համար։

Պետական Խորհրդի երկրորդ դեպարտամենտը համաձայնեց կօնցեսսիա տալ անգլիացի Ստիւարտին կապալով ստանալու կովկասեան փոխարքայութեան մշակած պայմաններով առանց աճուրդի Կովկասում արքունական հողաբաժին՝ հիդրօ-էլեքտրական կայան հիմնելու համար։

Երէկ Նոր Պետերհօֆում Կայսրին բաղդ ունեցան ներկայանալ Պետ. Խորհրդի անդամ Դուրնօվօն, սենատօր Գարինը, Բերլինում ռուսաց դեսպան Սվերբէեվը, Ռումինիայում ռուսաց դեսպան Շեբէկօն և Ցէտինիէում ռուսաց դեսպան Գիրսը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

!!! ԱՄԱՉԵՑԷՔ !!!
Ձեր կօստիւմը ամբողջապէս ծածկված է բծերով, մինչդեռ նա կարող է լինել բոլորովին նոր։ Գնեցէք բծահան կրէմ
Автоматическій пятновыводный кремъ „Чудодѣй" Людвига Керіяйнъ
Безъ труда мытья, щетокъ и затраты времени
ц. 20 и 35 к.
Выводитъ всѣ пятна изъ любой ткани
Թող միշտ մաքուր կը լինէք! Վաճառվում է ամենուրեք։ Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը՝ Ի. Պ. Նէստէրօվի մօտ, Ս.-Պետերբուրգում, Старо-Петергофскій пр. соб. д. № 18. Կովկասում բացառապէս վաճառվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների խանութում, Թիֆլիսում, Բագւում, Բաթումում։
(10, 20) 334. 10—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵԱՆԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱԻՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին եւ նեարդային։
Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—57

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ձ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
Ընդունում է երեխաների և կանանց հիւանդութիւնների համար։
Կօջոր, Ստեփանեանի ամարանոց, դեղատան հանդէպ։
(Հ.Հ.) 435. 10—2

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մալախաբերը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կոպ.)
Այս գրքի վաճառումից գոյանալիք գումար յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tifl s, Rédaction du journal arménien „Mschak".

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից
1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I . . . գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ . . . 1 ր. 50
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . — 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս.-ի. — 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի 1 ր. — կ.
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . — 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Արշակ Սաֆարեանի 1 ր. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգմ. գերմ. Իս. Ցարութիւնեանի, — 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիօնի. Թ. Հ. Առաքելեանի 1 ր. 50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . 1 ր. 20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արչ. Մխիթարեանի . . . — 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, թարգմ. Հ. Առաքելեանի . — 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկպ. Գ. Բաբեանի
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . . 1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան . . . 1 ր. 60 կ.
14) ՔԵՆՈՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի . . . — 50 կ.
15) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, թարգմ. Լ. Բաբայեանի — 50 կ.
16) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգմ. Հ. Առաքելեանի . 1 ր. —
17) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի — 40 կ.
18) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . — 60 կ.
19) ԷԴՄՈՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, թարգմ. Հմ. Մաժինեանի — 50 կ.
20) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տօլստօյի, թարգմ. Սուրխաթեանի . — 30 կ.
21) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստօյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . — 7 կ.
22) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստօյի, թ. Լ. Դանիէլեանի — 5 կ.
23) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստօյի, թարգմ. Լ. Դանիէլեանի . . — 5 կ.
24) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստօյի, թարգմ. Լ. Դանիէլեանի — 10 կ.
25) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի . . . . . 1 ր. —
26) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . . — 40 կ.
27) ՄԻ ՀՆՉԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեվագրութիւն), Ստ. Մալխասեանցի . — 20 կ.
28) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի — 35 կ.
29) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . — 15 կ.
30) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի — 15 կ.
31) ՃԱՊՕՆԻԱ կամ ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի . . — 25 կ.
32) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . — 30 կ.
33) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի — 25 կ.
34) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուտարեանի — 80 կ.
Վերոյիշեալ 35 կտոր գրքերը, որոնց ընդհանուր արժէքն է 20 ր. 62 կ., վաճառվում են հետեւեալ պայմաններով։
Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 րուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղչ։
«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ 50—30

ՄԵՍԱԴՈՆ ԲԱՐԲԱՐՈՒԹԻՒՆԸ, որ դուք կարող էք անել ձեր մազերին, կայանում է կանոնաւոր կերպով ձեր մազերը Պիկսաֆօնով լուանալու մէջ, որ ոչ միայն մաքրում է գլխի մազերը և կաշին, այլև, պարունակելով իր մէջ ձիւթ (քիմիական պատեհոյին միջոցով զերծված հոտից և գոյնից), ուղղակի գրգռեցուցիչ կերպով ազդում է մազերի արմատի վրա։
Մազերը Պիկսաֆօնով խնամելը ամենալաւ իսկական միջոցն է գլխի կաշին մաքրելու և մազերը ամրացնելու համար։ Պիկսաֆօնով մի քանի անգամ լուանալուց յետոյ ամեն ոք զգում է նրա բարեբար ազդեցութիւնը։
Պիկսաֆօնի մէկ սրուակը, որ բաւականում է մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կոպ.։ Վաճառվում է բոլոր համապատասխան խանութներում։ Ամենալաւ վարսավիրները գլուխների լուացումը կատարում են Պիկսաֆօնով։
(Մ. 219820) 1—1

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրտին և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.